

## ՆԱԽԱԳԱՅ ԱՍՏԵՆԴՈՒՆԵՅ ԱՐԽԱՉԻՈՅ ԵՒ ՍՈՐԻԹԱՆԻՈՅ ԴԵՄՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԱԽՏԱՐՄԱԳԻՐԸ

Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Մուհամմետ Ճալալովիճին հաւատարմագիրը, որպէս Սուրիոյ մէջ Արաբական Ռաշադիոյ Յանրապետութեան լիազօր դեսպան, ինչպէս նաեւ Սիտի Ուալատ Տոմանի հաւատարմագիրը, որպէս Սուրիոյ մէջ Մորիթանիոյ Իսլամական Յանրապետութեան լիազօր դեսպան:



Հաւատարմագրերու ընդունման արարողութեան ներկայ էին Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ եւ Սուրիոյ Հանրապետութեան Նախագահութեան ընդհանուր քարտուղար Մանսուր Ազգամ:

## ԴԵՄՊԱՆ ՏԱՀՀԱՔ. «ԱՄՆ-Ի ՍՈՐԻԱՆ ՀՐԹԻՈՎԱԿՈՑԵԼՈՒՆ ԿՐԱՏԱԿԸ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ԻՐ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ԴԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆՆ Է, ՈՐ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ ՆԱԵՒ ԻՍՐԱՅԷԷԱՆ ՀՐԹԻՈՎԱԿՈՑՈՒՄՆԵՐՈՎ»

ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մայրուն ներկայացուցիչ Քուսէի Տահիաք Նիւ Եորքի մէջ Երկուշաբթի օր գումարուած Ապահովութեան Խորհուրդի «Միջազգային ապահովութեան եւ խաղաղութեան սպառնալիքներ» օրակարգով արտակարգ նիստին ընթացքին շեշտեց, որ Սուրիա կտրականապէս կը մերժէ բոլոր այն պատրուակները, գործ ԱՄՆ կը ներկայացնէ արդարացնելու իր թշնամական յարձակումները սուրիական տարածքներու վրայ: Յարձակումին նպատակն է պաշտպանել Ուաշինկթընի գործիքները՝ սկսեալ ահաբեկչական խմբաւորումներէն, հասնելով մինչեւ անջատողական աշխարհագորայիններ:



Տահիաք նկատել տուաւ, որ այս յարձակումները, որոնց հետեւանքով նահատակուեցան 37 զինուորներ եւ քաղաքայիններ, կը համալրուին իսրայէլեան շարունակուող հրթիռակոծումներով, այդուամենայնիւ այս յարձակումները պիտի չկասեցնեն Սուրիոյ պայքարը՝ ազատագրելու իր ամբողջ հողատարածքները օտար, ապօրինի զինեալ ուժերէ, վերջ տալու ահաբեկչութեան, վերահաստատելու պետութեան գերիշխանութիւնը Սուրիոյ ողջ տարածքին, ամրագրելու օրէնքի գերակայութիւնը եւ ժողովուրդին ապահովութիւնը:

Տահիաք Սուրիոյ անունով շնորհակալութիւն յայտնեց Ռուսիոյ դաշնութեան մայրուն պատուիրակութեան այս նիստը գումարելու կարելիութեան ստեղծման համար՝ ի պատասխան Սուրիոյ եւ բարեկամ Իրաքի տարածքներուն ուղղուած ԱՄՆ-ի յարձակումներուն, որոնք սպառնալիք կը համարուին տարածաշրջանային եւ միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան ու բացայայտ խախտում՝ միջազգային իրաւունքին, միջազգային մարդասիրական իրաւունքին, սկզբունքներուն եւ նպատակներուն, ինչ որ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին յստակ դատապարտման պէտք է արժանանայ:

## ՅԱԿՈՉ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ Է ՍԱՍՈՒԷԼ ԸՆԶՐԱՄԱՆԵԱՆԻ ՇԵՏ ՄԱՍԼՈՅ ՀԱՊՈՐՊԱԳՐՈՒԹԻՒՆ

6 Փետրուար 2024-ին տեղի ունեցաւ հերթական հանդիպումը Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեանի եւ ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեանի միջեւ, որուն ներկայ էր ՀՀԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթուր Մոսիյեան:



Հանդիպման ընթացքին քննարկուեցան Արցախի պետական կառոյցներու պահպանման անհրաժեշտութեան, արցախահայերու Արցախ վերադարձի եւ այլ իրաւունքներու պաշտպանութեան, Հայաստանի մէջ արցախահայերու ընկերային-տնտեսական եւ իրաւական վիճակի եւ մարդասիրական օժանդակութիւններու առնչուող հարցեր:

Արցախի Հանրապետութեան նախագահը ներկայացուց Արցախի կարգավիճակի եւ յառաջիկայ քայլերու առնչութեամբ իր պատկերացումները: ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչը ներկայացուց ՀՀ Դաշնակցութեան եւ Հայ Դատի գրասենեակներուն եւ յանձնախումբերուն կատարած աշխատանքները:

Աւարտին որոշուեցաւ շարունակել հանդիպումները:  
**ՀՀԴ Մամլոյ Դիւան  
 6 Փետրուար 2024**

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՏՐՊԵՅՃԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԳԱԽՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԵՒ ԱՆԿԷ ԲԻՏՈՂ ԴԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԱՍԻՆ ՀՅՂ ԲԻՒՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հետեւելով Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ ընթացող բանակցային գործընթացին, ուսումնասիրելով երկու երկիրներու բարձրաստիճան պաշտօնատարներու յայտարարութիւնները, կ'արձանագրենք.

- քննարկուող փաստաթուղթի համաձայնեցման գործընթացին մէջ, Ատրպէյճան կը ձգտի «տը իւրե» (De Jure) ամրագրել ուժի եւ ուժի սպառնալիքի կիրարկումով իր ձեռք բերածը՝ ցեղասպանական գործողութիւններով գործադրուած ցեղային գտման միջոցով Արցախի բռնակցումին եւ ՀՀ որոշ տարածքներու բռնագրաւման մասով՝ միաժամանակ պահպանելով Հայաստանէն այլ զիջումներ կորզելու հնարաւորութիւնը.



- ըստ Եւրոպեան այսպիսի փաստաթուղթով Ատրպէյճանը կը փորձէ փակել Արցախի հարցը: Աւելին, կը մեծնան սպառնալիքները Հայաստանի նկատմամբ, Հայաստանի Հանրապետութիւնը չի ստանար որեւէ յաւելեալ երաշխիք՝ իր անվտանգութիւնը, տարածքային ամբողջականութիւնը, ինքնիշխանութիւնը եւ փոխադրական ուղիներու ապաշրջափակումը ապահովելու համար, ինչպէս նաեւ չեն ստեղծուի գործօն մեքանիզմներ, որոնցով հնարաւոր կը դառնայ կանխել Ատրպէյճանի կողմէ հետագայ թշնամական քայլերը՝ ներառեալ ռազմական նախայարձակումը:

Ստեղծուած պայմաններուն մէջ, հաշուի առնելով առկայ իրողութիւնները, ազգային-պետական շահերու պաշտպանութեան հիման վրայ յարաբերութիւններու կարգաւորումը պէտք է ընթանայ առնուազն հետեւեալ սկզբունքներուն համաձայն.

1. վստահութեան մթնոլորտի ձեւաւորման նպատակով որպէս նախապայմաններ դիտարկել ՀՀ ինքնիշխան տարածքէն ատրպէյճանական զօրքերու դուրս բերելը, ինչպէս նաեւ բոլոր ռազմագերիներու ու պահուող անձերու վերադարձը, գոյութիւն ունեցող մարդասիրական բնոյթի խնդիրներու լուծումը եւ մշակութային ժառանգութեան պահպանումը.

2. մայրուն խաղաղութիւն հաստատելու համար, որպէսզի տուեալ պայմանագիրը հանդիսանայ յարաբերութիւններու կարգաւորման ամբողջա-

Խմբագրական

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՅԱՂԹԱՀԱՐՈՂ ԱԶԳԻՆ ՇԱՌԱԲԻՂՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՄՈՒՈՐԻՒ

Ծառի մը շառաւիղները եթէ արմատին հետ կտրեն անգամ, ծառը առանձին աճելու կարելիութիւն կ'ունենայ: Սակայն եթէ ծառը արմատէն պոկեն՝ վերջ կու տան անոր կեանքին բնականաբար:

Այդպէս է նաեւ ազգի մը պարագային: Եթէ ազգի մը շառաւիղները անջատուին իրենց արմատներէն, հողէն, մշակութային ու պատմական ժառանգութենէն, կրօնքէն ու ազգային գաղափարախօսութենէն, ժամանակի ընթացքին կը վերածուին օտարներու կողմէ կառավարելի հաւաքականութեան մը, որ իր առօրեայ օրապահիկը ապահովելէ բացի ոչ մէկ արժէք կը դաւանի:

Աւարայրի ճակատամարտն ու Սրբոց Վարդանանց տօնը մեր ազգային-եկեղեցական տօնացոյցին վրայ հաստատելու խորհուրդը այս եղած է հաստատաբար:

440-ական թուականներուն պարսից արքունիքը, խաղաղութեան պատրուակով որդեգրեց մարզպանական Հայաստանի պետական ինքնավարութիւնը վերացնելու եւ զայն պարսկական սովորական նահանգի վերածելու քաղաքականութիւն: Այս օրերուն նոյն քաղաքականութիւնը կը վարեն Ատրպէյճանն ու իր գործընկեր Թուրքիան՝ կրկին խաղաղութեան պատրուակով: Յազկերտ 2-րդն ալ խոստացած էր խաղաղութիւն, իսկ բիզանդացիները խոստացած էին զինուորական օգնութիւն տրամադրել Հայկական մարզպանութեան:

Ո՛չ առաջինին, ո՛չ երկրորդին վստահելով՝ օրուան հայ հոգեւոր եւ զինուորական ղեկավարութիւնն ու իշխանութիւնը իրենց սեփական ուժին ապահովեցան ու ժողովուրդի պոռթկումի ձայնին անսալով ընտրեցին պայքարի ուղին: Այդ պայքարն ալ անհաւասար ուժերու մէջ էր գերազանցապէս, սակայն հայկական կողմը կրցաւ կառչած մտաւ իր արմատներուն, իր ինքնութեան ու համախմբութեանը: Դեմ դրաւ յազկերտներու սպառնալիքներուն: Այդ պայքարին շնորհիւ հայ ազգը պահեց իր ինքնութիւնն ու դիմագիծը՝ հետագային կրկին անկախ պետութիւն հիմնելու հաւատքով: Ու հաւատքը գործի վերածութեամբ եւ մենք տարիներու մարտնչումէն ետք ունեցանք անկախ պետութիւն:

Այսօր ո՛չ այդ միասնականութիւնը պահուած է Հայաստանի իշխանութեան վարած քաղաքականութեան մէջ, ոչ ալ արմատներուն կառչելու յանձնառութիւնը: Արցախը ափսոսելի վրայ հրամցնող, պատմութեան դասագիրքերը աղաւաղող ու ատրպէյճանաթրքական պահանջին անսալով Հայաստանի անկախութեան հռչակագիրն անգամ փոխելու նախաձեռնող Հայաստանի իշխանութիւնները, յանձնուած պետականութեան մը ուղին բռնած, պատերազմի սպառնալիքը կը հնչեցնեն անընդմիջաբար: Պատերազմի սպառնալիքը հնչեցնելով մէկտեղ կը փորձեն ազգը վերածել կառավարելի ժողովուրդի մը, զայն համոզել ջանալով որ Հայաստանի պաշտպանութեանը իր անպաշտպան, անպայքար մնալուն մէջ իսկ է:

Նորօրեայ յազկերտներու գերին դարձած այս իշխանութիւնները, որքան ալ արդարացնել փորձեն իրենց վարած քաղաքականութիւնը, իրենք գիրենք իրաւունք կը վերապահեն հազարամեակներու պատմութիւնն ունեցող մեր ազգին ինքնիշխան ու ազատ ապրելու եւ պատմական արդարութիւնը վերահաստատելու ձգտումները սեղմելու փոքր տարածքի մը մէջ ու այդ նպատակի իրականացման համար խզելու Հայաստան-Սփիւռք առընչութիւնները, ուրանալու Արցախի հայկական եւութիւնը, մեկուսացնելու Հայ եկեղեցին:

Մինչդեռ Վարդանանց խորհուրդը յստակօրէն կ'ուրուագծէ ազգ, պետութիւն, եկեղեցի գործակցութեան արդիւնաւետութիւնը՝ յազկերտներու եւ ալիքներու սուրին դեմ չընկրկելու եւ դիւանագիտական ու զինուորական առաւելութիւններ ձեռք բերելու համար:

Յազկերտներու սպառնալիքներուն, Հայոց Ցեղասպանութեան, Արցախի ոչնչացման դեմ պայքարի ճամբայ կերտած ու վերականգնելու համար պայքարած հայ ազգը մոլորեցնել կը փորձեն: Մոլորեցման այս ճիգերը ձախողութեան պէտք է դատապարտել՝ հաւաքական գիտակցութեամբ ու գործով:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց 2024-ի «7» եւ «8» թուակիր օրէնսդրական հրամանագրերը, որոնց համաձայն պետական քաղաքային, զինուորական եւ հանգստեան կոչուած պաշտօնէութեան ամսականները 50% համեմատութեամբ յաւելում կրեցին:



-Սեուտական Արաբիոյ իսլամական հարցերու նախարար շեյխ դոկտ. Ապտըլլաթիֆ հանդիպում մը ունեցաւ Սեուտական Արաբիոյ մէջ Սուրիոյ Հանրապետութեան դեսպան դոկտ. Այման Սուսանի հետ:

Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներու յարաբերութեան ամրապնդման շուրջ:

Նախարար Ապտըլլաթիֆ ողջունեց Սուսանը, ապա յաջողութիւն մաղթեց իր ստանձնած պաշտօնին մէջ, շեշտելով Սուրիոյ կարեւոր դիրքը՝ արաբական եւ իսլամական մակարդակներով:



Իր կարգին դեսպան Սուսան փոխանցեց Սուրիոյ կրօնական կալուածներու նախարար դոկտ. Մուհամմետ Ապտըրաթթար Սեյիտի ողջոյնները իր սեուտցի պաշտօնակիցին, զինք անգամ մը եւս Սուրիա այցելութեան հրաւիրելով:

- Զորքշարքի, 7 Փետրուար 2024-ի կէս գիշերուան ժամը 00:30-ին, Իսրայէլ օդային յարձակում մը գործեց Թրիփոլիի հիւսիսային բաժինէն Սուրիոյ Հոմս քաղաքին եւ անոր արուարձանի կարգ մը կէտերուն վրայ:



Յարձակումին հետեւանքով քաղաքացիներ նահատակուեցան, վիրաւորուեցան, ինչպէս նաեւ նիւթական վնասներ արձանագրուեցան:

Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնցմէ մաս մը:

-Սուրիոյ ինութիւններու եւ թանգարաններու ընդհանուր տնօրէն Նազիր Աուատ յայտնեց, որ Սուրիոյ արեւելեան շրջանին դեմ ԱՄՆ-ի գրոհին հետեւանքով շուրջ 1200-ամեայ Ռահպա հնագիտական բերդը վնասուած է:



Իր կարգին Սուրիոյ Մշակոյթի Նախարարութիւնը դատապարտեց ամերիկեան յարձակումը, որուն հետեւանքով վնասուեցաւ Ռահպա բերդը: Բերդը կառուցուած է 9-րդ դարուն, Մայատին շրջանին մէջ, Եփրատ գետին վրայ:

Նախարարութիւնը շեշտեց, որ այս գրոհը կը խախտէ միջազգային բոլոր օրէնքներն ու պայմանագրերը -որոնք կոչ կ'ուղղեն զինեալ բախումներու ընթացքին մշակութային հարստութիւնները պահպանելու- յատկապէս լուսարձակի տակ անելով նմանատիպ հարստութիւններ պահպանելու մասին 14 Մայիս 1954-ի Լահէյի համաձայնութիւնը:

-Իրանի Արտաքին գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց, որ ԱՄՆ-ի եւ Բրիտանիոյ Սուրիոյ, Իրաքի եւ Եմանի վրայ ի գործ դրած յարձակումները կը հակասեն պատերազմի ընդլայնումը կանխելու իրենց պատրուակներուն:



Նախարարութիւնը շեշտեց, որ այս յարձակումները տարածաշրջանի տագնապային իրավիճակը կը սրեն, միջազգային օրէնքները կը խախտեն եւ Իսրայէլին առիթ կ'ընծայեն Կազգայի մէջ իր ոճիրները շարունակելու:

-Օմանի արտաքին գործոց նախարար Պատր պըն Համատ ալ-Պուսափտի շեշտեց, որ սուրիական եւ իրաքեան տարածքներու վրայ ԱՄՆ-ի յարձակումները կը սպառնան տարածաշրջանի կայունութեան եւ խաղաղութեան:



Օմանեան լրատու գործակալութիւններուն համաձայն, Պուսափտի նկատել տուաւ. «Օմանի Սուլթանութիւնը սուրիական եւ իրաքեան տարածքներու վրայ նման զինուորական յարձակումներ ոչ միայն սպառնալիք կը համարէ շրջանի խաղաղութեան, այլեւ արգելք՝ շրջանի դիմագրուած մարտահրաւերներու յաղթահարման»:

Նախարարը եզրափակելով ըսաւ, որ Օմանի Սուլթանութեան դիտակիւնէն տարածաշրջանի հարցերուն լուծումը Պաղեստինի պետութեան միջազգային ճանաչումով ու Իսրայէլի պաղեստինեան բոլոր հողերէն դուրս գալով կ'իրականանայ:

# Լուրեր Հայաշխարհին

## ԱԼԻԵՒ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱԿԱՅԻՆ ԿԱՐԵԼԻ Ե ԽԱՐԱԴՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԻՆ»

Հայաստանի Սահմանադրության եւ այլ փաստաթուղթերու փոփոխութիւններու պարագային կարելի է հասնիլ խաղաղութեան: ԱՓԱ կը հարգորդէ, որ այս մասին ըսած է Ատրպէյճանի Նախագահ Իլիհամ Ալիեւ՝ ընդունելով Միջխորհրդարանական միութեան ընդհանուր քարտուղար Մարթին Չունկունկը:

Ալիեւ Նաեւ ըսած է. «Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ տե՛ ֆաքթօ խաղաղութիւն հաստատուած է»:

Ըստ անոր, «Երկու երկիրներու սահմանին քանի մը ամիսէ ի վեր խաղաղ կացութիւն կը տիրէ»:



«Յոյնոյթը իր տրամաբանական ակարտին հասցնելու համար պէտք է խաղաղութեան համաձայնագիր կնքել եւ վերջ տալ Ատրպէյճանի Նկատմամբ Հայաստանի տարածքային յաւակնութիւններուն», ըսած է Ալիեւ:

Ատրպէյճանի Նախագահը միեւնոյն ժամանակ սպառնացած է, որ եթէ ԵԽԽՎ-ի մէջ ատրպէյճանական պատուիրակութեան իրաւունքները չվերականգնուին, Ատրպէյճանի՝ Եւրոպական խորհուրդի եւ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մասնակցութեան հարցը վերատեսութեան պիտի ենթարկուի:

Անդրադառնալով Ֆրանսային՝ Ալիեւ յայտնած է. «Շրջանին մէջ ապակառուցողական քաղաքականութիւն վարելով՝ Ֆրանսան կրակի վրայ պէնզին կը թափէ»:

Ըստ Ալիեւի, Փարիզը շրջանին մէջ լարուածութեան պատճառ կը հանդիսանայ եւ միջազգային տարբեր կազմակերպութիւններուն մէջ եւ խորհրդարանական մակարդակով հակատրպէյճանական քաղաքականութիւն կը վարէ:

Ան Ֆրանսան մեղադրած է վարելու համար այնպիսի քաղաքականութիւն, որ ուղղուած է հարակրկական շրջանին մէջ յառաջատար դիրքեր գրաւելուն եւ իր ազդեցութեան ամրապնդման:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՈՒԺԻ ՄԵՉ ՄՏԱՒ ՀՈՈՄԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստան 1 Փետրուարին պաշտօնապէս միացաւ Միջազգային քրեական դատարանին: Հայաստանի համար 1 Փետրուարէն սկսեալ ուժի մէջ մտաւ Հռոմի կանոնադրութիւնը:

Հայաստանի Ազգային Ժողովը 3 Հոկտեմբեր 2023-ին միայն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութեան 60 թերքուններով վաւերացուց Հռոմի կանոնադրութիւնը, իսկ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Վահագն Խաչատրեան 14 Հոկտեմբեր 2023-ին գայն ստորագրեց, որմէ ետք արտաքին գործոց Նախարարը այդ մասին տեղեկացուց Միջազգային քրեական դատարանը:

Ազգային ժողովի քուէարկութենէն շուրջ երկու ժամ ետք Զրեմիլը յայտարարեց, որ Հռոմի կանոնադրութեան վաւերացումը Ռուսիա-Հայաստան յարաբերութիւններու տեսանկիւնէն ճիշդ քայլ է:



Սոսկուայի դժգոհութեան պատճառը այն է, որ Միջազգային քրեական դատարանը 2023-ին Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի ձեռքարկութեան հրամանագիր արձակած է, եւ Հայաստան իբրեւ դատարանի լիիրաւ անդամ ստիպուած պիտի ըլլայ այդ հրամանագիրը գործադրել:

Երեւան իր կարգին յայտարարած է, որ Հռոմի կանոնադրութեան միանալով կ'ուզէ Ատրպէյճանը պատասխանատուութեան ենթարկել զինուորական յանցագործութիւններու համար:

Երեւան կը խօսի Նաեւ արցախահայերու տեղահանութեան համար Ատրպէյճանի դէմ Միջազգային քրեական դատարան հայց ներկայացնելու կարելիութեան մասին:

Ռուսիոյ համար կարեւոր է, որ Միջազգային քրեական դատարանին Հայաստանի տէ՛ Ժիւրէ եւ տէ՛ ֆաքթօ անդամակցութիւնը բացասաբար չազդէ երկկողմանի յարաբերութիւններուն վրայ: Այս մասին «ՌԻԱ Նովոսթի»-ի փոխանցումով լրագրողներուն ըսած է Ռուսիոյ Նախագահի բանբեր Տմիթրի Փետրով՝ արձագանգելով Հայաստանի համար Հռոմի կանոնադրութեան ուժի մէջ մտնելուն:

Հայաստանի Հանրապետութեան մէջ Ֆրանսայի դեսպանը, անդրադառնալով Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրութեան պաշտօնապէս ուժի մէջ մտնելուն, «Էքս»-ի վրայ գրեց. «Հայաստանի կողմէ խիզախ որոշում է, որ կը նպաստէ անպատճելիութեան դէմ պայքարին»:

## ՎԱՐՊԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ԴԱՏԵՉ ԱՌԻԹԸ ԿԱՅ, ՈՐ ՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՐԱԸ ԱՏՐԴԵՅՃԱՆԻ ԴԱՆԱՆՑՆԵՐՈՒՆ ԴԻՄՆՅ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԵՂԱՆԻՆ ԴՆԵ ԱՐՅԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ»

ՀՀ արտաքին գործոց Նախկին Նախարար Վարդան Օսկանեան իր դիմատետրի էջին վրայ գրառում կատարած է՝ անդրադառնալով Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու հարցերով պաշտպանութեան յանձնախումբի յայտարարութեան ու նշելով, որ կը փափաքի քանի մը լրացում ընել:

Գրառումը ամբողջութեամբ կը ներկայացնենք ստորեւ:

«Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու հարցերով պաշտպանութեան յանձնախումբը իր երկրորդ յայտարարութիւնը տարածած է, որուն մէջ կը յստականայ յանձնախումբի Նախնական կազմը: Որոշ մանրամասնութիւններ հաղորդուած են Նաեւ աշխատանքի ուղղութիւններուն մասին:

Ես կ'ուզեմ այս յայտարարութիւնը լրացնել քանի մը մեկնաբանութիւններով:

Առաջին, ինչպէս նշուած է յայտարարութեան մէջ, սա յանձնախումբի Նախնական կազմն է: Անկախ անպայման պիտի ընդլայնուի՝ աւելի լայն աշխարհագրութիւն ստանալու համար, եւ անոր մէջ անպայմանօրէն մասնակիցներ պիտի ըլլան Ռուսիայէ եւ Մերձաւոր Արեւելէն:

Երկրորդ, յանձնախումբին առջեւ դրուած հիմնական հարցը՝ արցախահայութեան հիմնարար իրաւունքներու պաշտպանութիւնը եւ առաջին կարգին անոնց՝ միջազգային երաշխիքներով հաւաքական հայրենադարձութիւնն է:

Երրորդ, ես կը կարծեմ՝ այսօր, աւելի, քան երբեք, պատեհ առիթը կայ, որ հայկական կողմը Ատրպէյճանի յարատեւ եւ անհաւանական պահանջներուն դիմաց բանակցութիւններու սեղանին դնէ արցախահայութեան՝ միջազգային երաշխիքներով հաւաքական հայրենադարձութեան հարցը:

Այս պահանջին միջազգային իրաւական բոլոր հիմքերը կան: Աւելին, երբ հայ ժողովուրդի մէկ հատուածը տեղահանուած է իր բնօրրանէն, միայն այս հարցին իրականացումը պիտի նպաստէ ժողովուրդներու միջեւ իրական խաղաղութեան հաստատումին»:

Նշենք, որ 2 Փետրուարին, Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան հարցերու յանձնախումբը յայտարարութիւն տարածած էր, որուն մէջ ըսուած էր.

«Ի լրումն 18 Յունուար 2024-ի յայտարարութեան՝ Արցախի հիմնական քաղաքական ուժերուն հետ գործակցութեամբ ձեւաւորուած Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան հարցերու յանձնախումբը կը յայտնէ, որ յանձնախումբի Նախնական կազմին մէջ հետեւեալ անհատներն են.

Վարդան Օսկանեան, ՀՀ արտաքին գործոց Նախարար (1998-2008)

Գեղամ Ստեփանեան, Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Կարէն Պէքարեան, «Հայեացք» վերլուծական կեդրոնի խորհուրդի Նախագահ, Հայաստան

Մարիո Նալպատեան, Հայ Դատի կեդրոնական խորհուրդի անդամ, Արժանթին



Գասպար Կարապետեան, Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբի Նախագահ, Պելճիքա

Գառնիկ Զըրքունեան, միջազգային իրաւաբան, ԱՄՆ

- Յանձնախումբի կազմը կ'ընդլայնուի՝ ներառելով անհատներ Ռուսիայէ եւ Մերձաւոր Արեւելէն:

- Յանձնախումբի գլխաւոր հարցը պիտի ըլլայ Արցախի ժողովուրդին՝ միջազգային երաշխիքներով հաւաքական հայրենադարձութեան եւ իր հայրենիքին մէջ ապահով, անվտանգ ու արժանապատիւ ապրելու իրաւունքի հետապնդումը եւ պաշտպանութիւնը:

- Արցախի ժողովուրդը ցեղասպանութեան սպառնալիքին տակ բռնի տեղահանուած է իր տունէն, հողէն ու հայրենիքէն եւ անոր բնական եւ անքակտելի իրաւունքն է անխոչընդոտ վերադառնալ իր բնօրրանը, շարունակել բնականօրէն ժողովրդավարական կեանքը՝ իր լեզուի, մշակոյթի, հոգեւոր ժառանգութեան պահպանման, սեփականութեան վերատիրացման, զարգացման եւ կեանքի կազմակերպման՝ միջազգայնօրէն ընդունելի ձեւաչափերով եւ սկզբունքներով:

- Հակամարտութեան հետեւանքով բռնի տեղահանուածներուն՝ իրենց հայրենիք կամաւոր վերադառնալու իրաւունքը ճանչցուած է որպէս միջազգային իրաւունքի ձեւաչափ, որ հիմնաւորուած է Մարդու իրաւունքներու համընդհանուր հռչակագիրով (Universal Declaration of Human Rights), Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու միջազգային համաձայնութեամբ (International Convention on Civil and Political Rights) եւ տարածաշրջանային բազմաթիւ հռչակագիրներով:

- Աւելին, 17 Նոյեմբերի 2023-ին Արդարադատութեան Միջազգային Դատարանը (ICJ) վճռած է, որ Ատրպէյճանի Հանրապետութիւնը պէտք է ապահովէ 19 Սեպտեմբեր 2023-էն վերջ Լեռնային Ղարաբաղը լքածներու անվտանգ եւ անարգ

## ԵՒՐՈՊԱՅԻ ՉԱՆԳՈՒԾՆԵՐԻՆ ՍՈՐՎԵԼԻՔ ՈՒՆԻՆՔ



Ս. Սուսիտյան

2023-ի Դեկտեմբերին ի վեր, Եվրոպայի երկրներ կը բարձրանան քիչ մը ամեն տեղ, արեւելեան թէ արեւմտեան կողմն Եվրոպայի: Յոյցեր, գործադուլ, ճամբաներու փակում: Բողոքի ալիքը սահմանափակուած է մէկ կալուածի մէջ, այլ կ'ընդգրկէ ցամաքային եւ օդային փոխադրամիջոցները, երկրագործները, անասնաբոյժ-անասնապահները եւ այլ ասպարեզներու մէջ աշխատողներ, որոնք իրենց կողքին շահած են գանգուածները:

Բողոքի շարժումը անելի հնչեղ դարձաւ վերջին երկու շաբաթներուն, երբ երկրագործներ ու ագարակապաններ, գործադուլի եւ հրապարակային այլ ցոյցերու սահմանէն անդին երթալով, սկսան պաշարման տակ առնել մայրաքաղաքներ ու քաղաքներ, փակեցին սահմաններ, անշարժութեան մատնել երկրին այս կամ այն գօտին (իսկ Եվրոպական Միութեան մէջ սահման հասկացողութիւնը հիմա տարբեր է): Եթէ Փարիզն ու Ֆրանսական քաղաքներ, ապա նաեւ Եվրոպական Միութեան ոստանը նկատուող Պրիւքսէլը գրաւեցին գանգուածային լրատու աղբիւրներու նորագոյն լուսարձակները, անդին, շարժումը լայն արձագանգ գտաւ Անգլիոյ, Սպանիոյ, Իտալիոյ, Յունաստանի, Փորթուկալի, Յոլանտայի, Ռումանիոյ եւ Լեհաստանի մէջ, յիշելու համար շարժումին յիշարժան օրրանները:



Գանգատին խորագիրները բազմաթիւ են. հիմնականը՝ ՍՂՈՒԹԻՒՆԸ: Մարդիկ կը գանգատին, որ ուժանիւթը (վառելանիւթ ու էլեկտրականութիւն), պարարտացուցիչները, մեքենաներն ու գործիքները անհամեմատ տղած են, այնքան մը, որ իրենց աշխատանքը դարձած է անշահաւետ (ականջը խօսի Յայաստանի երկրագործներուն): Գանգատ կը բարձրանայ, որ Ուքրանիոյ տրամադրուած՝ ազատ առեւտուրի, այսինքն՝ անկէ անհակակշիռ ներածումի շարժումը անարդար վիճակ ստեղծած է տեղական արտադրութեանց համար, կայ նաեւ «Եվրոպայի սահմաններէն դուրս» երկիրներ (կը յիշուին հարաւ-ամերիկեան երկիրներ) ազատ ներածումներու ստեղծած անարդար վիճակը: Ձայներ կը բարձրանան միջատասպաններու անհամաչափ օգտագործման, կենսոլորտի հարցերու եւ նման՝ «երկրորդական» նկատուող տագնապներու դէմ:



այս շարժումին ձեռքբերումը: Փետրուարի սկիզբներուն, ալիքը տեղատուութեան նշաններ ի յայտ բերաւ, սակայն ցուցարար բողոքողները զենքերը վարչէն դրած:

### ՈՒՔՐԱՆԻԱՆ ՄԻԱԿ «ՅԱՆՑԱՒՈՐ»-Ը ԶԷ...

Ո՛չ ոքի ուշադրութենէն վրիպեցաւ այն, որ բողոքի եւ պաշարումներու ալիքը գագաթնակէտի մը հասաւ ճիշդ այն օրը, երբ Եվրոպական Միութիւնը գերաստիճան մը կը գումարէր Պրիւքսէլի մէջ, օրակարգի վրայ ունենալով Ուքրանիոյ 50 միլիարտ եւրոյի նոր օժանդակութիւն տրամադրելու ծրագիր մը: Յուցարարներն ու բողոքողները կը գանգատին, որ իրենց կառավարութիւնները անտեսումի լուսանցքին վրայ նետած են սեփական երկիրներու հոգերը եւ իրարու հետ մրցումի ելած են՝ Ուքրանիան գինելու եւ անոր կործանուող տնտեսութեան օգնութեան ձեռք երկարելու համար (հոս էնք ուզէր քննարկման նիւթ դարձնել այն, որ Ուքրանիա ինչո՞ւ այս վիճակին մատուցեցաւ, եւ արդեօք պե՞տք է անվերջ շարունակել Ուքրանիոյ գիւնումը, կամ՝ որքա՞ն կրնայ տեսել «Դանայեան տակառ»-ը լեցնելու մրցավազքը):

Դէպի Ուքրանիա հոսող եվրոպական գումարներուն ծիրին մէջ, ոչինչ կ'ընուի Իսրայելը գինելու եւ պաղեստինցիներու շարդին մասնակից դառնալու իրականութեան մասին: Նման բացայայտում ընող մը անմիջապէս պիտի պիտակուի իբրեւ «հակասեմական». մասնաւորաբար գերմանացիք չեն ժպրիիր նման քայլ առնել: Ու ոեւէ մէկը հարց չի տար, թէ արդեօք արաքները հնդեւրոպակա՞ն, թէ կարմիր կամ դեղին ցեղերու կը պատկանին: (ԶԷ՞ որ նմանապէս հարց չի տրուիր, թէ իսլամական Թուրքիան ալ անարգել կը շարդէ իսլամ քիւրտերը, իսլամ սուրիացիներն ու իրացիները...):

Չտարածուիք մեր քննարկումին մէջ: Ուրեմն, Եվրոպացիք հիմա կը գգաւն, որ իրենց տառապանքներուն եւ ապրուստի տագնապներուն գլխաւոր պատճառը՝ Ուքրանիոյ մէջ ուղիղ երկու տարի առաջ պայթած պատերազմն է (բանիմացը պիտի ըսեր՝ նո՛ր բարի լոյս): Չանգուածային մամուլը կը շարունակէ մեղադրանքներ շռայլել Ռուսիոյ հասցէին (չենք ըսեր, թէ Ռուսիա բոլորովին անմեղ է, սակայն կը մոռցուին պատերազմին շարժառիթներուն իսկական պատճառները եւ հարց չի տրուիր, թէ ո՞ր դարակը նետուած են Արեւելք-Արեւմուտք մեղմացումի 90-ականներու թղթածրարները):

Քիչ կը խօսուի այս պատերազմին գլխաւոր շահառուներուն մասին, որոնք շարքին, առաջին տեղը կը գրաւեն զենքի արտադրիչներն ու վաճառականները: Սակայն եկե՛ք, պահ մը բանանք պզտիկ - ո՛չ միակ - քողարկեալ ծալք մը, եւ հարց տանք, թէ Ուքրանիայէն ցորեն, շաքար, միս եւ այլ արտադրանքներ ներածողները (փոքրամասնութիւն մը անկասկած) եւ այդ արտադրանքները անհաւասար մրցակցութեամբ Եվրոպայի շուկաներուն մէջ տարածողները ի՞նչ «շահաբաժին» ունին այս պատերազմին մէջ, եւ ատիկա կ'ըլլայ տեղական արտադրանքներուն հարուած տալու, սեփական երկիրներուն տնտեսութիւնը ձեւով մը դաշունահարելու գնով...:

Եթէ նման իրականութիւններուն մասին անադմուկ խօսողներ կան, գրեթէ ո՛չ ոք կը խօսի այլ շահարկողի մը մասին, որ կը կոչուի Միացեալ Նահանգներ, անելի ճիշդ՝ գայն իրենց տիրապետութեան տակ առած՝ զենքի, քարիւղի եւ ճարտարարուեստի-առեւտուրի այլ կալուածներու հսկաներ: Օրինակի համար, երբ կը խօսին վառելանիւթերու եւ փոխադրամիջոցներու սակերու բարձրացման մասին, այսինքն՝ ապրուստի սղութեան գլխաւոր ազդակին մասին, չի յիշուիր, թէ Միացեալ Նահանգներ ինչպէ՞ս բռնած է Եվրոպական երկիրներու կոկորդէն եւ իր կամքը կը պարտադրէ բոլորին (կամքը պարտադրելը միայն ընդդէմ Ռուսիոյ քարոզչութիւն ընելուն չի վերաբերիր): Մոռցուած է, թէ մինչեւ երկու-երեք տարի առաջ, Եվրոպա բաւական աժան վառելանիւթ կը ներածէր Ռուսիայէն, կազատար հըսկայական խողովակներ ձգուած էին ծովերու յատակէն: Օր մըն ալ, այդ խողովակները պայթեցան, Ռուսիան ամբաստանուցեալ իբրեւ խափանա-



րար (մի՛ հարցնեք, թէ ի՞նչ տրամաբանութեամբ պիտի պայթեցնէր իր արտածած կազին խողովակը), յետոյ, քննութիւնները պահ մը աղմկարար կերպով շարունակուեցան, հիմա բարձի թողի տղած են, ու Եվրոպացիք մոռցած են, որ ռուսական կազի փոխարէն, իրենց պարտադրուած է շատ անելի բարձր սակերով ամերիկեան

կազ (եւ այլ արտադրանքներ) ներածել, չի յիշատակուիր, թէ քարիւղի արաբական երկիրներու «բանալիները» կը գտնուին անոնց ձեռքին, որոնք կը տիրապետեն ամերիկեան տնտեսական հզօրանքի աղբիւրներուն: Չի խօսուիր մանաւանդ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ճամբով - եւ անոնց շահաբաժին տրամադրելով - Եվրոպա հասնող ռուսական վառելանիւթին մասին...

### ՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Եվրոպան եռեւեփող յիշեալ ալիքներուն՝ մակընթացութեանց եւ տեղատուութիւններու դիմաց, հայկական աշխարհը, ի մասնաւորի Հայաստանը կ'ապրի անոնց արձագանգներուն լուսանցքին վրայ:

Ուքրանիոյ պատերազմը, անմիջականօրէն եւ կարճ ժամանակի համար, դրական շարժում մը բերաւ Հայաստանին: Ռուսիոյ դէմ որդեգրուած պատժամիջոցները, գաղտնիք չէ, մեծ գումարներ հոսեցուց Յայաստան, որ դարձաւ ռուսական շուկան աշխարհին կապող մակընթաց մը (մի՛ հարցնեք, թէ «Ռուսիոյ հետ գործակցողին դէմ ալ պատժամիջոց պիտի որդեգրենք» սպառնացող Արեւմուտքը ինչո՞ւ անտարբեր մնաց. եւ լա՛ւ է որ անտարբեր մնաց): Տնտեսութեան մէջ դրական թիւեր արձանագրուեցան վերջին երկու տարիներուն, սակայն վերջին ամիսներուն, ըստ տնտեսագետ-էլեմետազէտներու՝ դրական ալիքին մարումի նշանները սկսած են ի յայտ գալ: Խորքին մէջ, երկրին տնտեսութիւնը այդքան ալ չէ նպաստաւորուած, ո՛չ միայն անոր համար, որ օրինակի համար՝ անոր դիմաց ունեցանք Արցախի նման անհաշուելի կորուստներ (հողային եւ տնտեսական), այլ որովհետեւ տնտեսվարումը կը մնայ մակապարտեզային մակարդակի վրայ (այդ ալ դուրսերէն որոշ «ներշնչումով»): Անշուշտ օգտուող փոքրամասնութիւն մը կայ Հայաստանի մէջ եւս, անոնք՝ որոնք վարձքով բնակարան տրամադրած են դուրսէն եկողներու եւ աշխատանքի կոչուած՝ նորաստեղծ ընկերութիւններու մէջ (սա դրական կէտ մը կարելի է նկատել բնականաբար), սակայն այնպէս, ՍՂՈՒԹԻՒՆ ՈՒ ՍՂԱՃԸ «նպաստաւորուած են»: Ուքրանիայէն եւ այլ տեղերէ փչող՝ համաշխարհային տնտեսական, ապրուստի սղութեան հովերէն:

Երեւանի լրատու աղբիւրները երկու «դասակարգ» ունին. կայ իշխանութեան հակակշիռին ենթակայ կալուածը, որ կը փորձէ ամեն բան վարդագոյն, գոյնզգոյն ներկայացնել, եւ կայ իրատես կալուածը, որ լաւին կ'ընէ լաւ, իսկ վատին կու տայ իր իրական անունը:

Ապրուստի վիճակը, մասնաւորաբար սահմանափակ եկամուտով բնակիչին, գիւղացիին համար (առոնց կողքին են արցախցի գաղթականները), վիճակը ծանր է: Ծառ սահմանափակ եւ կարճատեւ շարժումներ կ'արձա-

## «ԵՐՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ»

### ՆԱՄԱԵՐՈՊԱԿԱՆ ԶՕՐԱՇԱՐԺ

**Երոպահայությունը կը շեշտէ իր յանձնառությունը  
շարունակելու պայքարը արցախահայութեան  
իրաւունքներուն պաշտպանութեան համար**

● Ֆրանսայի Անթոնի քաղաքի «Անթոնիի ֆրանսահայ միութեան» երիտասարդները հանդիպում մը կազմակերպեցին պատմաբան Յարութիւն Գեորգեանին հետ Կիրակի 28 Յունուարին, «Երոպացիները յանուն Արցախի» շարժումին ծիրէն ներս:

● Ֆրանսայի Կրեմոնա քաղաքի, հայ մշակութային տան մէջ տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, որուն մասնակցեցան բազմաթիւ քաղաքական դէմքեր եւ լրագրողներ:

● Շրջանի հայութիւնը առիթ ունեցաւ լսելու հարց եւ պատասխանները:

● Վիլըրպան (Ֆրանսա) - Վիլըրպանի 3-րդ մշակոյթի տունը «Յայաստանի գանձերը» (Les tresors de l'Armenie) տեսաերիզը ցուցադրեց Շաբաթ 27 Յունուարին: 2017-ին պատրաստուած այս վաւերագրական տեսաերիզը կը ներկայացնէ արցախեան կողողները եւ եկեղեցիները:

● Ռոմանիոյ Իասի եւ Զոսթան քաղաքներուն մէջ տեղի ունեցան հաւաքներ, մասնակիցները բարձրացուցին Արցախի մագձագէրիներուն եւ բանտարկեալներուն ազատ արձակման պահանջը:



Յունաստան - Աթէնք

● Վրաստանի Թիֆլիս քաղաքի մէջ՝ Երրոմիութեան ներկայացուցչութեան գրասենեակի առջեւ տեղի ունեցաւ հաւաք: Յոյցի մասնակիցները բռնած էին իրենց պահանջները ձեւակերպող պաստառներ: Ուսանողները կարդացին անգլերէնով գրուած դիմումը, որ պիտի ներկայացուի Երրոմիութեան ներկայացուցչութեան, ինչպէս նաեւ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի խմբակցութիւններուն ուղերձը մասնակիցներուն:

Այս ցոյցին համընթաց Թիֆլիսի թրքական եւ ատրպէյճանական դեսպանութիւններուն նախաձեռնութեամբ տեղի ունեցած է այլ «ցոյց» մը, որուն ընթացքին վերոնշեալ դեսպանութիւններուն աշխատողները խումբ մը մարդիկ բերած են՝ ցոյց ընելու:

● Կիպրահայութիւնը իր բողոքի ձայնը լսելի դարձնելու համար հաւաքուած էր Նիկոսիոյ հայկական եկեղեցւոյ շրջափակին մէջ՝ Յեղասպանութեան զոհերուն յիշատակին կանգնեցուած յուշակոթողին կից: Հաւաքին յաջորդաբար խօսք առին «Երոպացիները յանուն Արցախի» շարժումի ներկայացուցիչ՝ Պրն. Վահան Այնեճեան, Կիպրացի Կանաչներ կուսակցութեան փոխ նախագահ պրն. Զիրիաքոս Յիմիլիս, Սթրոմվոսի քաղաքապետ պրն. Անտրէաս Փափաշարաւամպուս եւ Կիպրոսի թեմի Առաջնորդ՝ Խորէն Տորամաճեան:

● Կիպրոսի Լիմասոլ քաղաքի հայութիւնը հաւաքուած էր եկեղեցւոյ բակին մէջ եւ իր բողոքի ձայնը միացուց Երրոպայի միւս քաղաքներուն մէջ հաւաքուած միւս հայրենակիցներուն: Հաւաքի ընթացքին խօսք առաւ Կիպրոսի 3-րդ Դատի Յանձնախումբի ատենապետ Յակոբ Գազանճեան:

● Պուլկարիոյ մէջ, Պուրկասի Սք. Խաչ, Վառնայի Սուրբ Սարգիս, Ռուսի Սուրբ Աստուածածին, Փլովտիվի Սուրբ Գեորգ, Սոֆիայի Սուրբ Աստուածածին, Խասկովոյի Սուրբ Ստեփանոս, Շումենի Սուրբ Աստուածածին եկեղեցիները շրջափակեցին մէջ պուլկարահայութիւնը, իր կարգին, մասնակից դարձաւ Արցախի զօրակցութեան բողոքի հաւաքներուն:

● Շուէտի Սթոքհոլմ քաղաքին մէջ Արցախի նուիրուած գեղարուեստական ձեռնարկ մը տեղի ունեցաւ մասնակցութեամբ ՀԱԸՄ-ի սկաւտներուն: Ձեռնարկին բացումը կատարուեցաւ Հայաստանեաց Առաքելական եկեղեցւոյ Վեհափառ Գարեգին Բ. Կաթողիկոսի խօսքով, ապա տեսաերիզներ ցուցադրուեցան: Բացման խօսքը կարդաց ՀԱԸՄ-ի Վարչութեան անդամ Յովան Ծերունեան: Օրուան բանախօսներն էին հայերէնով Սիմոն Տեր Սահակեան (ՀՅԴ հիւսիսեան կոմիտեութեան քաղաքական ներկայացուցիչ) եւ շուէտերէնով Սթոքհոլմի եկեղեցական խորհուրդի անդամ Նաթալի Արզումանեան:

● Վիեննայի մէջ կազմակերպուած հաւաքին ընթացքին շրջանի հայութիւնը արտայայտեց իր բողոքի ձայնը Ատրպէյճանի իշխանութիւններու վարած քաղաքականութեան ինչպէս նաեւ զօրակցութիւն յայտնեց բռնի տեղահանուած արցախահայութեան:

● Յունաստանի Աթէնք քաղաքի հաւաքը տեղի ունեցաւ Սինթակմա

հրապարակը: Օրուան բանախօսն էր Արման Գրիգորեանը (Հայ Դատի Յանձնախումբի անդամ): Ներկայ էին երեսփոխաններ Սթեփոս Ֆոթոփոլոս եւ Վասիլիս Դրամէնոս, Նեա Չմիռնիի քաղաքապետ Եորղոս Զուրաբեան, ինչպէս նաեւ համայնքի կրօնական եւ քաղաքական ներկայացուցիչներ: Ողջոյնի խօսքեր ուղղեցին փրոֆ. Նիքոս Լիդերոս, քաղաքապետ Զուրաբեան, լրագրող Գոսթաս Փլիաքոս, որոնք անցեալին Արցախ այցելած էին:

● Յունաստանի Գաւալա քաղաքին մէջ կազմակերպուած հաւաքին տեղի հայութեան կողքին ներկայ եղան հելլէն խորհրդարանի պատգամաւորներ Փասխալիտիս եւ Տելիքարի, փոխ մարզպետ Մարքոփոլոս, մարզային խորհուրդի անդամներ Իոսիֆիտիս, Իդնաթիատիս, Անտոնիատիս եւ քաղաքապետական խորհուրդի նախագահ Մամգատելիս: Հաւաքի ընթացքին բաժնուեցան Ատրպէյճանի իշխանութիւններու գործած ոճիրները բացայայտող թուղթեր, իսկ տեղական երեք հեռուստաընկերութիւններ անդրադարձան հաւաքին:

● Յունաստանի Թեսալոնիկէ քաղաքի հաւաքը սկսաւ կեսօրէն ետք ժամը 13:00-ին, Մշակոյթի տան առջեւ, ներկայութեամբ «Նոր ժողովրդավարութիւն» կուսակցութեան երեսփոխաններ Գոնտանիոս Ծիուլէքասի եւ Տիմիթիոս Գուվելասի եւ «Սպարտացիներ» կուսակցութեան երեսփոխան Պետրոս Տիմիթիատիսի: Ներկաները աղօթեցին Արցախի ազատագրութեան, զոհուածներուն հոգիներուն համար եւ Արցախի ժողովուրդին ապագային համար:

● Հաւաքներ տեղի ունեցան նաեւ Յունաստանի Փիրեա եւ Սերբա քաղաքներուն մէջ:

● Պելճիքայի մայրաքաղաք Պրիստինի հաւաքը տեղի ունեցաւ Սուրբ Մարիամ Մագդաղենացի եկեղեցւոյ շրջափակին մէջ: Հաւաքի ընթացքին խօսք առաւ Կարէն Թաթեւոսեան Պելճիքայի հայերուն վեհաժողովի նախագահը, որ ներկայացուց «Երոպացիներ յանուն Արցախի» շարժումը, անոր աշխատանքները ծիրը, եւ ներկայացուց բոլոր նախաձեռնութիւնները, որոնք կազմակերպուած են թիրախ ունենալով Երոպական խորհրդարանը եւ Երոպական միութիւնը թէ՛ Պրիստինի եւ թէ՛ 15 այլ երկիրներու մէջ: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ 27 եւ 28 Յունուարին, 15 երկիրներու 55 քաղաքներու մէջ միաժամանակ տեղի ունեցած են զանազան միջոցառումներ, բոլորը՝ յանուն Արցախի: Ան իր խօսքին ընդմէջէն արտայայտեց հայութեան յուսախաբութիւնը այն իմաստով, որ հակառակ բազմաթիւ խնստումներուն եւ եղած յայտարարութիւններուն որեւէ գործնական քայլ չէ առնուած շարժումին պահանջներուն առնչութեամբ:

Հաւաքին ընթացքին խօսք առաւ նաեւ Michel De Maegd (Belgian Federal MP): Ան վերահաստատեց իր պատրաստակամութիւնը շարունակելու մօտ ըլլալ հայութեան եւ աշխատելու ի շահ հայութեան դատին հիմա՝ եւ կայանալիք յաջորդ ընտրութիւններէն ետք, կրկին ընտրուելու պարագային: Ան փոխանցեց, որ յաջորդ Չորեքշաբթի Նոր հարցադրում պիտի ընէ արտաքին գործոց նախարարին Արցախէն բռնի հեռացուած 130 000 հայերու վիճակին մասին:

Խօսք առաւ նաեւ Darya Safai (Belgian Federal MP), ան ըսաւ, որ մօտէն կը հետեւի հայութեան խնդիրներուն եւ ֆետերալ խորհրդարանին մէջ Հայ Դատին առնչուող բազմաթիւ հարցադրումներ ըրած է: Ան ալ իր կարգին վերահաստատեց, որ թէ՛ հիմա եւ թէ՛ 5 ամիս վերջ կայանալիք ընտրութիւններէն ետք պիտի մնայ հայութեան կողքին:



Հոլանտա - Ալմէյօ

Հաւաքին ընթացքին հայր Զատիկ Աւետիքեան ներածական մը ըրաւ եւ ներկայացուց հաւաքին կազմակերպիչները՝ «Երոպացիները Յանուն Արցախի» շարժումը, Պրիստինի մէջ Հայոց առաքելական եկեղեցին, եւ Երոպայի Հայ Դատի Յանձնախումբը: Ան ալ իր կարգին անդրադարձաւ գերիներու խնդիրին եւ առեւանգուած նախկին ղեկավարներուն վերադարձի կարեւորութեան:

Ապա խօսք առաւ Գասպար Կարապետեան՝ ՀՅԴ Երոպայի Հայ Դատի գրասենեակի նախագահ, որ յստակօրէն ներկայացուց «Երոպացիները Յանուն Արցախի» շարժումին պահանջները:

Հաւաքին ընթացքին ցուցարարներուն կողքին էին նաեւ՝ Փիէր տ'Արժան - Լուվենի Կաթոլիկ համալսարանի դասախօս Ժորժ Տալլեման - Դաշնային պատգամաւոր Անտրէ Տիւ Պիւ - Պելճիքայի Ծերակոյտի անդամ, Արցախի հետ ֆրանսացիներու հարաբերութիւնները

## Թուրքիոյ նուրջ

### «ROSE DE DIARBEKIR» ԳԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ (ՓԱՐԻՉ)

Զորքը շարքի, 31 Յունուար 2024-ին, Համագայինի Փարիզի մասնաճիւղը ներկայացուց Գորին Չարգաւաճեանի «Rose de Diarbekir» գիրքը:

Ներկայացումը ղեկավարեց յայտնի լրագրող Ժան Գրիստոֆ Պիսոն, որ հերթաբար խօսք տուաւ գրողին, տպագրողին եւ պատմաբան Գլէր Մուրատեանին:



Պատմաբանը բացատրեց պատմութիւնը օրերուն, 1890-ական թուականներուն, Օսմանեան կայսրութեան քաղաքական մթնոլորտն ու իրադարձութիւնները:

Ներկայ էր նաեւ Միշել Տիւրան Մերիէ, Կիւստաւ Մերիէի ծոռը՝ Տիգրանակերտի այդ օրերու ֆրանսացի հիւպատոսը, որ իր պաշտպանութեան տակ առնելով, ջարդերէ փրկած է 300 հայորդիներ:

80-է աւելի ներկաներ մեծ ուշադրութեամբ ունկնդրեցին ներկայացումը: Երեկոյի վերջաւորութեան Գ. Չարգաւաճեան մակագրեց գիրքը:

### ՎԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ Կ'ՈՂՋՈՒՆԵՆ ԻՐԱՆ-ԹՈՒՐԷԻԱ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՅԱՎԷՏԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Թուրքիոյ Վան նահանգի Իրանի հետ սահմանամերձ «Բաշքալա» քաղաքին մէջ «Գլինջիկ» սահմանային անցակէտի մօտակայ բացման լուրը ուրախութիւն առթած է շրջանի բնակիչներուն:



Ինչպէս կը յայտնէ Pars Today-ը, առևտուրի նախարարութեան պաշտօնէաները եւ Բաշքալայի շրջանի նահանգապետ Մուստաֆա Չելիք ներկայ գտնուելով Իրանի սահմանին գտնուող Գլինջիկ շրջան, որոշում գոյացուցած են այս սահմանային անցակէտի վերաբացման ժամկէտին մասին:

Իրան-Թուրքիա սահմանային շրջանի «Գլինջիկ» սահմանակէտը ոչ լեռնային է եւ կը գտնուի Իրանի Արեւմտեան Ատրպատական նահանգի Սալմաստ քաղաքէն 20 քմ. հեռավորութեան վրայ:

### ԵՒՐՈՊԱՅԻ...

Սկիզբ՝ էջ 4

Նագրուին, օրինակ՝ ձկնորսներուն բողոքը եւ այլն (հիմա ձմեռ է, օրերը կարճ են...), սակայն ընդհանուր պահանջատիրութիւն մը չի բարձրանար: Ամէն մարդ ստիպուած է «իր կարապետը լալ»: Ձկնորսին տագնապը կարծեք թէ աղերս չունի պայթած շուկայի մը եւ այլ առեւտրականներու, զինուորներ կորսնցուցած ընտանիքներու ցաւերուն հետ. հոն ալ բողոքի ալիքները կարճատեւ են: Արեւախի եւ հայրենի հողերու կորստեան տագնապներն ալ կը ստեղծեն «մանր ալիքներ», որոնք կը փշրուին ոստիկաններու վահաններուն դիմաց:

#### ԻՆՉՈ՞ՒՆ Կ'ԱՐԴԻՆԱՌՈՐՈՒՆ

Քանի սկսանք տնտեսական-ընկերային հարցերով, վերադառնանք այդ ոլորտը:

Եւրոպայի մէջ պայթած է ծաւալած, երկրէ երկիր արձագանգ գտած - եւ մեծ ու փոքր ձեռքբերումներ իրագործող - բողոքի շարժումները որոշ յաջողութեան կը հասնին, կ'ապահովեն շարունակականութիւն, որովհետեւ իշխանութիւններու ձախաւերութիւններուն դէմ դրօշ բարձրացնողները ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ են, ունին յստակ օրակարգ, անկախ անկէ, թէ ի՞նչ գոյն ունի տուեալ երկրին իշխանութիւնը: Կան արհեստակցական միութիւններ, համադաշնակցութիւններ, ընկերակցութիւններ, որոնք կապ կը պահեն իրարու հետ, մէկը միւսին զօրակից կ'ըլլայ: Բողոքը սկսողը գիտէ, թէ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱՌՈՒՆԷԻ համար կը շարժի (չմոռնանք, որ հոն հողի-հայրենիքի կորուստի հարցեր չկան, այսինքն՝ մեր ցաւը աւելի խորն է): Որոշ նախագահի մը, վարչապետի մը քուէ տուողը չ'ըսեր, որ ան «ազգընտիր է», իրեն «մանտաթ տուած եմ, ինչ որ ուզէ՝ թող ընէ»: (Միամիտ չեմք, սակայն նախանձախնդիր՝ որ տեղ մըն ալ դուրսէն իրաւունքի պաշտպանութեան հովերէ նպաստ քաղենք, ո՛չ միայն ուքրանական նպաստաւորող գեպիւններէն):

Կայ աւելին. Հայաստանի մէջ սպասելին՝ լոկ տնտեսական-ընկերային տագնապին դէմ բողոքի լայն ալիքը չէ, նման ալիքի մը ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ՝ հիմնականին մէջ բոլոր այն ձեռքբերուն կողմէ, որոնք պէտք է աշխատաւորական ու արհեստակցական համադաշնակցութիւններու դերը կատարեն, նման միաւորներ ունենան: Հայաստանի մէջ կորուստը ունի շատ աւելի՛ վտանգաւոր երեսներ. հող ու հայրենիք կը կորսնցնենք քայլ առ քայլ, եւ իշխանութիւնը կը շարունակէ իր խաղերը խաղալ, մանրապատումներով, օր աւուր խելապատիկներէ դուրս ցատկող «գիւտերով» է որ կը զբաղենք զանգուածը, ըսել կ'ուզենք՝ կը շարունակէ խաբել ու քնացնել բոլորը:

Եւրոպայի շարժումներ նորութիւն չեն քաղաքակիրթ, անարդար իշխանաւորներու դէմ պայքարող ԳՈՐԾՈՂ-ԱՇԽԱՏՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ աշխարհին մէջ, եւ հակառակ տեղը այլերու եւ նահանջներու, միշտ ալ դէպի յառաջ շարժումը ի վերջոյ յաջողութիւններ արձանագրած է եւ կեանքի պայմանները տարած է դէպի բարելաւում, տեղ-տեղ իրականացուցած է իշխանափոխութիւն, երգելով՝ «Երբ չի մնում ելք ու ճար...»:

### «ԵՒՐՈՊԱՅԻՆՆԵՐԸ...

Սկիզբ՝ էջ 5

սախօս բարեկամութեան խումբի համակարգող

Էրվէ Դուայեն - Պելճիքայի Ծերակոյտի անդամ

● Պելճիքայի Մեխելէն քաղաքի հանրահաւաքին ընթացքին խօսք առաւ Մեխելէնի հայոց հոգեւոր առաջնորդ Տէր Արմէն Քահանայ Մելքոնեան: Ան ներկայացուց հետեւեալ պահանջները՝ ազատութիւն Պաքուի մէջ բանտարկուած գերիներուն, անվտանգութեան երաշխիքներ արցախահայութեան պատմական հայրենիք վերադարձին համար, Հայաստանի Հանրապետութեան տարածքէն թշնամի զօրքերու հեռացում, պատժամիջոցներու հաստատում Ատրպեյճանի դէմ:

Տէր Արմէն քահանայ Մելքոնեան նաեւ յայտնեց, որ Արցախի հարցը մեզի համար գոցուած հարց չէ, պէտք է պայքարը շարունակել:

Հաւաքին ներկայ էր Մեխելէնի քաղաքային իշխանութիւններուն անդամ Մարք Դենտրիքսը (Nieuw-Vlaamse Alliantie կուսակցութիւն):

● Ամսթերտամ (Հոլանտա) - Ամսթերտամի կեդրոնական Տամ հրապարակը տեղի ունեցաւ ցոյց մը, որուն ընթացքին հնչեցին լոզունքներ՝ «պատժեցէք Ատրպեյճանը», «ազատ արձակեցէք հայ գերիները», «Արցախը հայ է», «Ալիւ խափանարար», «Երտողան խափանարար»:

● Ալմէլօ (Հոլանտա) - Հայ առաքելական եկեղեցւոյ մէջ ընթերցուեցաւ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի խմբակցութիւններուն ուղերձը եւ բացատրուեցաւ Եւրոպացիները յանուն Արցախի շարժման նպատակը: Հանրութիւնը պահանջեց, որ Պաքուի մէջ բանտարկուած գերիները ազատ արձակուին եւ զօրակցութիւն յայտնեց Արցախի ժողովուրդին հետ: Նոյնանման ձեռնարկ մը տեղի ունեցաւ Ալմէլոյի ՀՄԸՄ-ի շէնքին մէջ:

● Անիմ (Հոլանտա) - Անիմի ՀՄԸՄ-ի կազմակերպած ձեռնարկին ընթերցուեցաւ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի խմբակցութիւններուն ուղերձը եւ բացատրուեցաւ «Եւրոպացիները Յանուն Արցախի» շարժումին նպատակը: Հանրութիւնը զօրակցութիւն յայտնեց Արցախի ժողովուրդին եւ հաստատեց Սփիւռքին կարեւոր դերը այս ժամանակաշրջանին:

(շար. 2 եւ վերջ)

www.kantsasar.com

www.kantsasar.com

www.kantsasar.com

## Պրիմալեյտ

# ԴԵՂԻՆ ԹԻԹԵՆՆԻԿ




Մարուշ Երամեան

Աֆղան-անգլիահայտակ վիպագիր Սալման Ռուշտի իրաւամբ ըստ է. «Բանաստեղծութիւնը չի կրնար փամփուշտ մը կեցնել, Վեպ մը չի կրնար ռումբ մը քակել, Բայց մենք այնքան ալ անօգ չենք, Կրնանք բարձրաձայն խօսիլ ճշմարտութեան մասին եւ ստախօսներուն անունները յայտարարել»:

Ի՞նչ կրնայ ընել սակայն արուեստագետը՝ գրագետ, նկարիչ, քանդակագործ թէ երաժիշտ, պատերազմներու ընթացքին: Եւ եթէ նկատի առնենք, թէ այսօր քանի-քանի ճակատներու վրայ եւ երկիրներու մէջ պատերազմ կ'ընթանայ իր ամենէն կատաղի ձեւով, կը հասկնանք, թէ արուեստագետներուն համար պայքարի միակ ձեւը ստեղծագործելն է:

Հակառակ անոր, որ գրեթէ դար մը առաջ հիմնուեր է «Փրկենք Մանուկները» կազմակերպութիւնը, անգլիացի ընկերաբան Էլլանթայն Ջեյբ (Eglantyne Jebb 1876-1928), մանուկները կը շարունակեն մնալ պատերազմէն ամենէն աւելի վնասուող կողմը:



- «Փրկենք Մանուկները» կազմակերպութեան առաքելութիւնն է՝ Ա. - Նուիրութիւն երեխաներու բարօրութեան եւ շահերուն.
- Բ. - Կեանքի անվտանգութեան ապահովում.
- Գ. - Չարագման իրաւունք եւ գիտութեան ջամբում.
- Դ. - Յարգանք մանուկի նկատմամբ:

Որքան դիւրին է նման կազմակերպութիւններ հիմնել ու առաքելութեան կետեր որոշելը, մինչ ամենէն արդիւնաւետ միջոցը պիտի ըլլար պատերազմներ ... չստեղծելը:

5 Յունիս 2023-ին կատարուած գեկոյց մը կ'ըսէ, թէ 2022 թուականին պատերազմներէն վնասուած մանուկներուն թիւը եղած է մօտաւորապէս 468 միլիոն երեխայ: Այս թիւը 2,8 տոկոսով աւելի է 2021-ի համեմատ:

Այս մտորումներուն մէջ էի, երբ համացանցի բաւիղներէն մեկուն մէջ հանդիպեցայ ուքրանացի նկարիչի մը՝ Ալեքսանդր Շաթոքի մանկական վերջին գիրքին, որ լոյս տեսեր է Յունուար 2023-ին, ներշնչուած ռուս-ուքրանական պատերազմէն եւ անոր ընթացքին մանուկներուն կրած տառապանքէն:

«Դեղին Թիթենիկ» կը կոչուի մանուկներու առաջին խմբաւորումին համար գրուած այս գիրքը:

Դեղին Թիթենիկի խորհրդանիշը նախապէս երեւցած է գոլումպիացի վիպագիր Գաբրիել Կարսիա Մարքեզի 1967-ին լոյս տեսած «Հարիւր Տարուան Մենութիւն» վեպին մէջ, ուր դեղին Թիթենիկներ - որպէս խորհրդանիշ սիրոյ եւ յոյսի - կը հետեւին հերոսին՝ Մորիսիո Պապիլոնիայի, ո՛ր որ երթայ:

Այլ գիրքի մը մէջ՝ «Թիթենիկ Դեղին», հեղինակութեամբ վիեթնամցի գրագիտուհի Թաննա Լիի, կը խօսուի Վիեթնամի պատերազմին վերջին օրերուն մէջ փոքրիկ հերոսուհիի մը արկածախնդրութիւններուն մասին, եղբայրը փնտռելու ճամբուն վրայ: Եւ Թիթենիկը կրկին կը դառնայ խորհրդանիշը յոյսի, վճռակամութեան, սիրոյ եւ վերապրումի:

Շաթոքի գիրքը սակայն կը տարբերի այլ գիրքերէ, որովհետեւ նախ ամբողջ գիրքը իրագործուած է ուքրանական դրօշին գոյներով՝ դեղին-կապոյտով. ապա՝ գիրքը գրեթէ անբառ է, այսինքն գրութիւն չունի, միայն պատկերներ են:

Սպասելի է անշուշտ, որ մայր մը կամ մեծ-մայր մը փոքրիկին հետ նստած խօսի անոր պատերազմին մասին, որմէ միշտ եւ ամէն տեղ ամենէն աւելի փոքրերն են որ կը տառապին եւ ... չեն հասկնար կատարուածը:

Պատերազմները անոնց հոգիներուն մէջ շատ խորունկ վերքեր կը սեր-

մանեն, որոնք ժամանակին հետ իսկ չեն սպիանար, եւ ապագային տարբեր ձեւերով՝ յաճախ նոյն բրտութեամբ դուրս կու գան, գիրքեր եւ իրենց շուրջինները նոյնքան ծանր կացութիւններու մատնելով:

Այլ խօսքով՝ պատերազմներուն աւարտէն ետք իսկ պատերազմը կը շարունակէ իր աւերը գործել փոքրերուն հոգիին մէջ:

Իւրաքանչիւր պատերազմ պատերազմ է մանուկներուն դէմ, կ'ըսէ թեւաւոր խօսքը:

Շաթոքի գիրքը, պատերազմին ընթացքին իրապէ՛ս շլմորած, յանկարծակի կերպով սկսած բիրտ դեպքերէն ոչինչ հասկցող աղջնակին ընկերակցող դեղին Թիթենիկին միջոցով յոյս կը սերմանէ եւ հաւատք, թէ գալիքը պիտի ըլլայ նոյնքան լուսաւոր, որքան նախապատերազմեան օրերն էին:

Պատերազմի արուեստ, մանաւանդ գրականութիւն միշտ ալ եղեր է՝ պատերազմական օրագրութիւններ, յուշագրութիւններ, անկէ ծնած բանաստեղծութիւն, յաճախ նաեւ գեղանկարներ եւ քանդակներ: Սակայն ասոնց մէջ չկան տոկոսն է միայն, որ կեդրոնացած կ'ըլլայ մանուկներուն, անոնց կրած տառապանքին եւ երեւոյթին առջեւ անոնց ապրած շլմորանքին վրայ:

Արցախեան երեք պատերազմներուն մասին ունինք որոշ թիւով գրականութիւն: Առաջին պատերազմին անմիջապէս յաջորդող շրջանին, «Բագին» հաստատվոր թիւ մը նուիրած էր այդ պատերազմին (Պեյրուօ, 1990, թիւ 9-12):

Հակառակ անոր, որ բազմաթիւ գիրքեր լոյս տեսած են Արցախեան պատերազմին մասին, գայն նկարագրող կամ ազատամարտիկներու քաջութիւնը, հայրենասիրութիւնն ու գոհաբերումը գովերգող, սակայն անոնց մէջ կը պակսին մանուկներու մասին գործեր, կամ մանուկներուն համար գրուած, պատերազմը բացատրող եւ անոնց ներքին անդոհանքը մեղմել փորձող գործեր:

Եթէ նկատի առնենք, թէ գրականութեան մէջ բախումը չորս տեսակ է՝ բախում անձին հետ, բախում այլին հետ, բախում շրջապատին հետ եւ բախում գերբնականին հետ, պիտի տեսնենք թէ որքա՛ն կարեւոր կը դառնայ մանուկներու պատերազմական գրականութիւնը, այս չորսէն գոնէ երկուքը բացատրելու համար:

Արձակագիր եւ բանաստեղծ, բնիկ արցախցի Հերմինէ Աւագեան, որ նաեւ Արցախի «Համագային»-ի գրասենեակին տնօրէնն էր, որ Արցախի նուիրուած «Ապրելու Ձայնը» մշակութային օրերու բացման հանդիսութեան իր խօսքին մէջ ըսած է.

«Պատերազմը միայն սահմանին չէ, սահմանից այս կողմ ուրիշ պատերազմ է՝ մշակոյթի, գրականութեան, ազգային արժէքների պահպանման ու տարածման. ու այս ասպարէզներում իւրաքանչիւր յարթանակ մեր ինքնութեան պահպանման, արժանապատիւ ապագայ ունենալու գրաւականներից է»:

Իսկ վաղուան մեր մշակոյթը բնականաբար պիտի նստի նոր սերունդին ուսերուն, մանաւանդ Արցախի նոր սերունդին, որուն մղած պատերազմները եւ կրած տառապանքները կարեւոր մաս մը կը կազմեն մեր արդի պատմութեան եւ որպէս այդպիսին կարեւոր տեղ պետք է ունենան մեր արուեստներուն մէջ:

Երեւանի մէջ բացուած են (վստահ չեմ՝ մե՞կ, թէ աւելի) գրասենեակներ, պատերազմէն ետք մանուկներուն հոգեբանութեան վերականգնումին համար:

Պէ՛տք է սակայն խոստովանիլ, թէ այդ գրասենեակներուն կամ դարմանատներուն տուած օգնութեան չափ կարեւոր են հեքիաթներն ու հեքիաթանման պատումները, որոնք մանուկներուն համար հասկնալի ձեւով կը ներկայացնեն պատերազմին իրողութիւնն ու անդոհանքը, որմէ վերջերս կարծես փախուստ չունի մարդկութիւնը, ո՛ր ալ որ ապրած ըլլայ, դժբախտաբար:

## ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ...

Սկիզբ՝ Էջ 3

գել վերադարձը:

- Յանձնախումբը բազմակողմանի գործունեութիւն կը ծաւալէ միջազգային հարթակներու վրայ՝ բարձրաձայնելու, ծանօթացնելու, հիմնաւորելու եւ հետապնդելու Արցախի ժողովուրդի հարցերը, շահերը եւ իրաւունքները:

- Յանձնախումբը, վերը նշեալ նպատակներու կեանքի կոչման համար, մշտական ու հետեւողական աշխատանք պիտի իրականացնէ արցախահայութեան, Հայաստանի հակրութեան ու Սփիւռքի հայրենակիցներուն հետ՝ նպատակ ունենալով ի մի բերել բոլոր աղբիւրները՝ քաղաքացիական հասարակութեան, լրատուամիջոցներու, ակադեմիական եւ փորձագիտական շրջանակները:

- Յանձնախումբը Արցախի ժողովուրդին պիտի ներկայացնէ պետական եւ քաղաքական մարմիններուն առջեւ, ինչպէս նաեւ միջազգային ատենակներու, համաժողովներու եւ միջազգային դատարաններու մէջ:

- Կ'ակնկալենք, որ ՀՀ իշխանութիւնները եւ քաղաքական բոլոր ուժերը աջակցութեան եւ գործակցութեան պատրաստակամութիւն կը ցուցաբերեն յանձնախումբի գործունեութեան: Յանձնախումբը պատրաստ է աշխատիլ անխտիր իւրաքանչիւրին եւ բոլորին հետ, որոնք պատրաստ են պատասխանատուութիւն ստանձնելու՝ համապատասխան լիազօրութիւն ստացած այս յանձնախումբին հետապնդած նպատակներուն համար»:

## ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄՊԻՈՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԱՌԱՐԿԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵԶՐՈՅԹՈՎ ԱՆՈՒՄԱՓՈԽԵԼՈՒ ԳԾՈՎ

Ստորեւ կը ներկայացնենք Երեւանի Պետական Համալսարանի (Այսուհետեւ՝ ԵՊՀ) Հայոց պատմութեան ամպիոնի դիրքորոշումը «Հայոց Պատմութիւն» առարկան «Հայաստանի Պատմութիւն» անուանափոխելու ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան Նախարարութեան օրէնսդրական Նախաձեռնութեան գծով:

Որոշումը միաձայնութեամբ ընդունուած է հայոց պատմութեան ամպիոնի 24 Յունուար 2024-ին տեղի ունեցած նիստին, որուն մասնակցած էին ամպիոնի 18 անդամներէն 14-ը եւ պատմութեան հիմնարկի ղեկան պ. գ. թ., դոցենտ Մ. Ռ. Գաբրիելեան:


1. Ամպիոնը իր տարակուսանքը եւ խոր մտահոգութիւնը յայտնած է, որ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան Նախարարութիւնը եւ անոր ենթակայ կառոյցները, առանց գիտական ու կրթական հանրութեան շրջանակի հետ լուրջ քննարկումներու, կրթական նոր չափորոշիչներէն եւ «Հայոց Պատմութեան» 7-րդ դասարանի աղմկայարոյց դասագիրքի հրատարակութենէն վերջ, հերթական չմտածուած եւ բնաւ չնախապատրաստուած քայլ կը կատարեն՝ շրջանառութեան մէջ մտցնելով նախագիծ մը, որ ոչ միայն չի բխիր ազգային-կրթական եւ ազգային-պետական շահերէն, այլեւ ակնյայտ քաղաքական ենթահող ունի, ժամանակավրէպ է, եւ որուն հետեւանքները վնասակար ու վտանգաւոր պիտի ըլլան ոչ միայն կրթական համակարգին, այլեւ՝ ընդհանրապէս Հայաստանի ու ողջ հայութեան համար:

2. Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան Նախարարութիւնը որդեգրած է գործելակերպ մը, որ ի սկզբանէ կազմակերպական առումով բացասական տպաւորութիւն կը թողու: Անանուն պատմաբաններու դիմումին հիման վրայ (փաստ չկայ, որ այդ պատմաբանները իրականութեան մէջ կան) անմիջապէս ի յայտ կու գայ փոփոխութիւններու նախագիծ եւ կը դրուի քննարկումի: Պարզ տրամաբանութիւնը կը յուշէ, որ առաջարկին պէտք է յաջորդէր անոր հեղինակներուն կողմէն իրենց առաջարկի հիմնաւորումներու հրապարակումը: Անոր պիտի յաջորդէր համապատասխան մասնագիտական կառոյցներու կարծիքներու ճշդումը, եւ դրական կարծիքներու պարագային միայն կազմուէր պատշաճ հիմնաւորուած փաստաթուղթ, որ կրնար ներկայացուիլ հանրային քննարկումի: Այսինքն՝ հարցումին պէտք է ցուցաբերուէր պետական-հիմնարկային մօտեցում, որ է կատարուած: Ատիկա կը խօսի գիտակրթական հաստատութիւններու նկատմամբ անթաքոյց անվստահութեան մասին եւ կը թողու դաւադրական գործողութիւններու տպաւորութիւն, որ բնաւ չի բխիր Հայաստանի Հանրապետութեան եւ, ընդհանրապէս, հայութեան շահերէն:

3. Հայոց պատմութիւն, թե՛ Հայաստանի պատմութիւն հարցադրումը եւ երկրորդը առաջինին հակադրելը ամպիոնի կարծիքով արհեստական է եւ կը բացատրուի նախագիծը նախաձեռնողներուն՝ որոշ իրողութիւններու չիմացութեամբ կամ գուտ քաղաքական ինչ-ինչ նկատառումներով: Անոր հետ կապուած՝ քանի մը պարզաբանումներ.

ա) Հանրակրթական առարկայի՝ ներկայիս կիրառուող «Հայոց Պատմութիւն» անուանումը գրաբարեան «Պատմութիւն Հայոց» ձեւակերպումի աշխարհաբարեան տարբերակն է: 1990-ական սկիզբը նորանկախ Հայաստանի պատմաբանները (ակադէմիկոսներ Լենտրուշ Խուրշուդեան, Հրաչիկ Սիմոնեան, Վլատիմիր Պարխուտարեան եւ այլք) տեւական քննարկումներէն վերջ որոշեցին հրաժարիլ խորհրդային տարիներուն կիրառուած «Հայ ժողովուրդի Պատմութիւն» անուանումէն եւ վերադարձ կատարել Ոսկեդարու շրջանէն մինչեւ ուշ միջնադար ու նոր (վաղ արդի) ժամանակաշրջան կիրառուած պատմագրական անունորոշիչ:

բ) «Հայոց Պատմութիւն» առարկայի անուանումէն «Հայոց» բառը «Հայք» բառի սեռական-տրական հոլովով է գրաբարի: «Հայք» բառը գրաբարի մէջ կը նշանակէ միաժամանակ եւ՝ «Հայաստան», եւ՝ «հայեր», որ փոխանցուած է նաեւ աշխարհաբարեան կիրառութեան (տե՛ս Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Ազգերեան Մ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, 2-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 1981, էջ 29; Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հատոր երրորդ, 2-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 36): Հետեւաբար՝ «Հայոց Պատմութիւն»-ը բովանդակային առումով աւելի տարողունակ եզրոյթ է՝ միաժամանակ կը նշանակէ եւ՝ Հայաստանի՝ որպէս պետութեան, եւ՝ հայերու պատմութիւն: Զերթոյցահայր Մովսէս Խորենացիի «Պատմութիւն Հայոց»-ը հայոց պետականութիւններու



պատմութիւնն է: Սկսեալ 5-րդ դարէն այս անուանումը աննդաբար կը կիրառուի՝ եւ՝ գրաբարի, եւ՝ միջին հայերէնի մէջ, եւ՝ արեւմտահայերէնի, եւ՝ արեւելահայերէնի մէջ: Կրթական գործընթացին եւ գիտութեան մէջ այդ եզրոյթի կիրառումով միաժամանակ կը լուծուի երկու հարց. նախ՝ մէկ եզրոյթով կը բնորոշուի հայոց պատմութիւնը ամբողջութեամբ՝ ներառեալ ինչպէս բուն Հայաստանի տարածքին պետականութեան պատմութիւնը, նոյնպէս ալ Հայաստանէն դուրս տեղի ունեցած՝ հայ ժողովուրդին առնչուող իրադարձութիւններն ու գործընթացները, երկրորդ՝ կ'ընդգծուի ժառանգական կապը ժամանակակից եւ նախորդ դարերու հայ պատմագրութեան միջեւ:

գ) Օտար լեզուներով կարելի չէ մէկ բառով արտայայտել «Հայոց Պատմութիւն» եզրոյթի վերոնշեալ երկու իմաստները: Ուստի անիկա այլ լեզուներու թարգմանելու ընթացքին օգտագործուած է «Հայաստանի Պատմութիւն» համագործելը (History of Armenia, История Армении, Histoire d'Arménie եւ այլն): Այդ տրամաբանութեամբ առաջնորդուած են 18-րդ դարու վերջը Միքայէլ Զամէեանը, 19-20-րդ դարերու բոլոր հայագետները (թե՛ հայ, թե՛ օտար), որոնք պահպանած են պատմագրութեան անունորոշիչ՝ կիրառելով «Պատմութիւն Հայոց» տարողունակ ձեւակերպումը հայերէնի մէջ եւ համապատասխան լեզուամտածողութեամբ թե՛ «Հայաստանի Պատմութիւն» (լատիներէն (1736), ռուսերէն (1809, 1858, 1990), ֆրանսերէն (1841, 1869) եւ այլն), թե՛ «Հայերու Պատմութիւն» (անգլերէն, 1978) տարբերակները այլ լեզուներու մէջ:

դ) Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան Նախարարութեան կողմէն հրապարակուած փաստաթուղթին մէջ թուարկուած երկիրներու օրինակով առաջարկուող փոփոխութեան հիմնաւորումը համոզիչ չէ: Օտար լեզուներու մէջ տուեալ երկրի պատմութիւնը ժողովուրդի պատմութենէն չի տարբերի կա՛մ փաստօրէն կը համընկնի, կա՛մ քաղաքական այլազան պատճառներով: Ֆրանսայի մէջ պաշտօնապէս ֆրանսացի կը համարուի Ֆրանսայի Հանրապետութեան քաղաքացին, հետեւաբար՝ տարբերակելու կարիք չկայ: Սաուտի Արաբիան լոկ 20-րդ դարուն ստեղծուած երիտասարդ պետութիւն է, որ պետականութեան անունորոշիչն է: Բացի անկէ, անիկա արաբական 22 պետութիւններէն լոկ մէկն է: Հետեւաբար՝ անոր պատմութիւնը արաբներու պատմութիւն անուանել կարելի չէ: Հնդկաստանը, Վրաստանն ու Ղազախստանը բազմազգ երկիրներ են,

ուր «Երկրի Պատմութիւն» անուանած եւ ու պետականակերտ ժողովուրդները կ'իրացնեն նաեւ այդ տարածքներուն մէջ ապրող այլ ժողովուրդներու պատմութիւնը: Բացի անկէ՝ եւ՝ վրացիները, եւ՝ ղազախները կը բաժնուին ենթացեղային հանրութիւններու (վրացիները՝ մենագրէներու ու սուաններու, ղազախները՝ աւագ, միջին եւ կրտսեր ժուգերու (ցեղախումբերու)): Հետեւաբար՝ վերը նշեալ պարագաներուն մէջ կը լուծուին այնպիսի քաղաքական հարցեր, որոնք Հայաստանի ու հայ ժողովուրդի հետ ոչ մէկ ընդհանրութիւն ունին:

Ի դէպ, նախարարութեան ներկայացուցած հիմնաւորման մէջ բերուած օրինակները յիշեալ երկիրներու դպրոցներուն մէջ դասաւանդուող առարկաներուն չեն վերաբերիր, այլ սոսկ առանձին գիրքերու անուանումներ են: Անհրաժեշտ էր ուսումնասիրել այդ երկիրներու դպրոցներուն մէջ ուսուցանուող տուեալ երկրի պատմութեան առարկայի անուանումները:

ե) Ի տարբերութիւն վերը բերուած օրինակներուն՝ Հայաստանի եւ հայ ժողովուրդի հետ պատմութեան դասաւանդումի ընդհանրութիւններ ունին, օրինակ, յոյները: Յունաստանի Հանրապետութեան դպրոցներուն մէջ «Յունաստանի պատմութիւն» անունով առանձին առարկայ չկայ, ամբողջ պատմութիւնը կը դասաւանդուի մէկ առարկայով, ուր նիւթին մեծ մասը ուղղակիօրէն Յունաստանի եւ յոյներու մասին է (յստակ պատկերացում կազմելու համար կ'առաջարկուին հետեւեալ յղումները:

Միեւնոյն ժամանակ յունական գրականութեան եւ գիտութեան մէջ կ'օգտագործուին ինչպէս Յոյն ժողովուրդի Պատմութիւն, նոյնպէս ալ Յունաստանի Պատմութիւն եզրոյթները, բայց աւելի տարածուած է «Ελληνική ιστορία» եզրոյթը, որ բովանդակային առումով համարժէք է «Հայոց Պատմութիւն» բառակապակցութեան, քանի որ Ελληνική բառը կրնայ թարգմանուիլ միաժամանակ եւ՝ «յունական», եւ՝ «Յունաստան» տարբերակներով:

4. Առաջարկուող փոփոխութիւնը անընդունելի է նաեւ հետեւեալ պատճառներով.

ա) Նախ, պարզ չէ, թե՛ տարածքային առումով իրմէ ինչ պիտի ներկայացնէ առաջարկուող Հայաստան եզրոյթը՝ պատմական Հայքը իր լայնածաւալ տարածքով, պաշտօնապէս 29800 քառակուսի քմ տարածքով ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնը, թե՛ որեւէ այլ բան: Մեր երկրի համար ներկայիս ստեղծուած խիստ անկայատ պայմաններուն, երբ վտանգուած են անոր սահմանները եւ առկայ են թշնամիի տարածքային անթաքոյց յաւակնութիւնները, նման հարցադրումը սոսկ հոետորական չէ եւ որոշակիութիւն կը պահանջէ:

բ) «Հայոց պատմութիւն» եզրոյթը «Հայաստանի Պատմութիւն»-ով փոխարինելը էապէս պիտի սահմանափակէ դասաւանդուող առարկայի բովանդակային շրջանակները: Հայաստանը նոյնիսկ պատմական Հայքի սահմաններով դիտարկելու պարագային անկէ դուրս պիտի մնան կամ խիստ թերի պիտի ներկայացուին հայոց պատմութեան այնպիսի առանցքային նիւթեր, որպիսիք են հայոց ծագումնաբանութեան, Կիլիկիոյ հայկական պետութեան, հայկական գաղթավայրերու ու Սփիւռքի, 18-րդ դարու երկրորդ կէսին, 19-րդ դարու երկրորդ կէսին եւ 20-րդ դարու սկիզբի հայ ազատագրական պայքարի, ուշ միջնադարի ու նոր շրջանի հայ մշակոյթի հիմնաւորները եւ այլն: Մասնաւորապէս՝ առարկայի ծրագրային շրջանակէն դուրս պիտի մնան հայ գրատպութեան, Հայաստանէն դուրս ծնած ու գործած մշակոյթի ականաւոր գործիչներու, հայ խոճայական, նոր շրջանին՝ դրամատուային եւ արդիւնաբերական տիրութեան, բարեգործական տարբեր կազմակերպութիւններու մասին բնաւ ոչ երկրորդական հարցերը, որոնք մեր պետութեան եւ ժողովուրդին համար լուրջ այցեքարթեր են արտաքին աշխարհին ներկայանալու համար: Որոշ պաշտօնատար անձերու կողմէն ինչո՞ւ պընդումները, թե՛ վերոնշեալ հարցերը պիտի ներառուին նոր անուանումով առարկայի ծրագիրներուն մէջ, համոզիչ չեն եւ որեւէ երաշխիքով ապահովագ-



## ՔԵՍԱԿՈՆ ՈՒ ՁԻՒՆԸ



**Սեւան Ա. Մամեդկեան**

Փետրուար ամիսն է: Զեսապի լեռնային ցուրտն ու հովը կը յուշեն, որ յաջորդ օրերուն ձիւն պիտի տեղայ:

Առտու կանուխ արթնցայ, ինչպէս ամէն դպրոցական օր, ու հագիլ գլուխս բարձեն վեր բարձրացուցած դիմաւորեցի արշալոյսի առաջին ճառագայթներն ու արեւը:

Այս անգամ սակայն գմայլած դուրս ելայ անկողինէս՝ վայելելու սպիտակ ձիւնը, որ պատած էր ամէնուրեք:

Ճամբուն ուստերը սիրով գրկած էին ձիւնի փաթիլները, իսկ մշտադալար ծամերը տարբեր ճոխութիւն մը ստացած էին՝ իրար միացնելով սպիտակ ու կանաչը: Դեռ էլէկտրականութեան թելերը, ցուիքները եւ ճամբաները??? մէկ խօսքով ձիւնի փաթիլները ամէն տեղ սպրդած էին:



Ձիւնը ակամայ արձակուրդ պարտադրեց, որովհետեւ Զեսապի ձիւնածածկ, գահավէժ, գառիվեր-գառիվար ճամբաներուն վրայ դպրոցներու ինքնաշարժներուն վտանգ կը սպառնայ:

Ձիւնը շարունակ կը տեղար, անոր փաթիլները մեղմօրէն ու հանդարտ, օրօրայով-շորօրայով վար կ'իջնէին՝ տեղաւորուելով ամէնուրեք:

Փոքրիկներն ալ ուրախ եւ եռանդուն էին գայն տեսնելով, սակայն պապուկին ուրախութիւնը անսահման էր. *«Ձիւնը թէ՛ մարդոց, թէ՛ բնութեան համար կարելորդ է, ձիւն տեղացած տարին հիւանդութիւնները կը նուազին: Ամէնէն կարելորդ՝ ձիւնը պարտեզներուն համար լիարժէքօրէն օգտաշատ է»*, կը մտմտար:

Հետզհետէ ձիւնի փաթիլները անելի խոշոր դարձան եւ սկսան գիրար հրել, հրմշտկել: Անոնք գետին հասնելու համար երբեմն մրցում կ'ընէին, որոնք ձեռք-ձեռքի տուած, համախոհութիւն կազմած, անելի արագ կը հասնէին՝ մրցող փաթիլներուն յաղթելով:

Փոքրերուն ուրախութիւնը անսահման էր: Անոնք կարծէք սուսերամարտի երաժշտութեան հետեւողութեամբ նստարանէ-նստարան եւ պատուհանէ-պատուհան կ'ոտոտէին: Մեծ մայրը գանոնք հանդարտեցնելու համար կը յորդորէր. *«Շատ մի՛ նայի՞ք ձիւնին, հիմա կ'ամչնայ ու ալ վար չ'իջնէր»*: Փոքրերը անոր ըսածին հաւատալով չէին ուզեր, որ ձիւնը իրենց պատճառով կանգ առնէր ու կը փորձէին քիչ մը հանդարտիլ: Անոնք իրենց աչքերուն ծայրով ձիւնին կը հետեւէին: Ու ինչքան սաստկանար, այնքան կը հրճուէին փոքրերուն սրտերը:

Անոնք ուրախութեան ճիչը կը բարձրանար՝ ձիւնին տակ մրսած թռչուններու ճվլոցին հետ խառնուելով: Նախաճաշի իրաւորող մօր ձայնն անգամ չէին լսեր, իսկ մայրը ականջ կու տար անոնց դժգոհանքին՝ *«Ե՞րբ ձիւնով պիտի խաղանք: Երբ ձիւնեմարդ պիտի շինենք»*:

Նախաճաշէն ետք, պապուկին ու մեծ մամային խոստացած անակընկալը գմայլեցուց գիրենք: Մեծ մամային բռնած ափսէին վրայ տեղաւորուած էր ձիւնով լեցուն մեծ պնակը, անոր կողքին ռուպի պնակը (խաղողի ջուրով պատրաստուած խոյս): Փոքրերուն աչքերը փայլեցան: Մեծ մայրը անոնց ուշադրութիւնը պատուհաններէն ներս հրաւիրեց:

Պապուկը յանձն առաւ պնակները ձիւնով լեցնելու արարողութիւնը: Անոնք բացատրեց թէ ի՞նչ կը նշանակէ «դարսամպած»-ը, ապա դգալ մը փափուկ ձիւնէն վերցնելով պնակին մէջ դրաւ, շեշտելով որ ձիւնը պէտք է մաքուր տարածութենէ հաւաքուած ըլլայ, ինչպէս մեծ մաման ըրած էր: Յետոյ ձիւնին վրայ առատ ռուպ անելով ակունքով բաժնեց բոլորին: Անշուշտ ընթացքին ան առիթը չկորսնցուց ռուպի օգուտներուն մասին խօսելու եւ անոր գովքը հիւսելու: Ան ըսաւ նաեւ, որ «դարսամպածը» թութի օշարակով ալ համով կ'ըլլայ: Ի՞նչ հոգ... փոքրերը ձիւնն ու ռուպը արդէն կու տուած էին:

Իսկ ձիւնը առանց ձիւնեմարդի ի՞նչ արժէք ունի...: Ամէնէն փոքրիկն իսկ կը փորձէր մօր համոզել. *«Մա՛մ, նայէ՛ ձիւնով ծածկուած ծառի ճիւղին կանգնած թռչունին, ինչ պզտիկ է, ոտքերը՝ բարակ, մայրը նոյնիսկ տաքատ չ'է հագցուցած իրեն, բայց ուրախ գուարթ ձիւնով կը խաղայ»*: Ուրեմն՝ օ՛հ... ու ձեռնոցներով, գլխարկներով, երկարաձիգ մոյկերով եւ վզ-նոցներով պատսպարուած դուրս վազեցին՝ ձիւնեմարդ շինելու:

Փոքրիկները իր հետեւողութեամբ սկսան ձիւն հաւաքել, ձիւնի կտորները դիզել, ապա մեծ գունդի վերածել: Ահա ձիւնամարդուն փորիկը պատրաստ էր, ուրիշ անելի փոքր գունդով մըն ալ անոր գլուխը տեղաւորեցին մեծ գունդին վրայ: Անոնք ամէնէն փոքրը գործուղուած էր տուն, որպէսզի ձիւնեմարդուն քիթը՝ ստեպիլըն եւ աչքերը՝ սեւ ձիթապտուղները բերէ: Մինչ հայրը անոր փորին վրայ երեք հատ խոշոր քար տեղաւորեց՝ կոճակի տպաւորութիւն տալու, ձեռքին ճիւղ մը բակցուց, վզնոցն ու գլխարկը տեղաւորեց անոր գլխուն վրայ, որպէսզի ձիւնեմարդը չպահի:

Մեծ մաման ու մաման պատուհանէն իրենց անհատում թելադրութիւնները կ'ուղղէին: Անոնք թեւ ուրախ էին փոքրերուն ուրախութեամբ,

սակայն մտահոգ էին, որ անոնք չմրսին ու չհիւանդանան: Վերջապէս անոնք մայրեր են ու մօր սիրտը որքան զաւակներուն սիրով յորդի, այնքան թելադրութիւններ դուրս կու գան անոնց շրթներէն:

Մեծ մայրը մտահոգ էր: Ան կը մտաբերէր իր անհոգ ու անխոհեմ երիտասարդութեան օրերը, ձիւնոտ օրերու սերն ու հրճուանքը, երբ ամէն ինչ խելքով չէր չափեր: Իսկ այսօր կը մտածէր, որ ձիւնի առաջին օրը հաճելի ու սիրուն է, սակայն թռչունները չեն գիտեր թէ վաղը իրենց ի՞նչ կը սպասէ: Այս սիրուն ձիւնը գիշերուան պաղէն պիտի սառի ու վաղը անոր վրայ քայլելը անկարելի պիտի դառնայ: Մարդիկ անհրաժեշտ գնումներու համար պէտք է դուրս գան: Անոնք ոչ սառած ձիւնը գիտեն, ոչ ալ զառիվերն ու զառիվարը: Անոր պիտի յաջորդէ էլէկտրականութեան հոսանքի անջատումը՝ փոթորիկին գործած անքններուն եւ էլէկտրական թելերուն վրայ կուտակուած ձիւնի ծանրութեան հետեւանքով: Ապա՝ ցուրտին հետեւանքով ջրմուղ խողովակներուն սառչիլը եւ ինքնաշարժներու անդամալուծուիլը: Այլ խօսքով՝ ձիւնին հաճոյքը վայելելուն պիտի յաջորդեն ձիւնին դառն հետեւանքները:

Ակնթարթի մը մէջ այս բոլորը շարժապատկերի նման մեծ մօր աչքին ու մտքին մէջ տողանցեցին: Սակայն ան չուզեց փոքրիկներուն զուարճանքն ու ձիւնին առթած հաճոյքը խանգարել: Վաղը անոնք ալ կը մեծանան ու կեանքի փորձառութիւնները ձեռք կը ձգեն, կը սորվին ու կ'իմանան, այն ատեն իրենք ալ իրենց զաւակները սիրով կը զգուշացնեն, սակայն թոյլ կու տան, որ անոնք ալ իրենց կարգին փորձառութիւն ձեռք ձգեն...:

Մեծ մայրը դէմքը լայն ժպիտով մը զարդարած կը կրկնէր.

Ձիւն՝ սպիտակ ձիւն

Արծաթե թիթեռնիկներ

Իմ անցած մանկութիւն...:

### ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ...

✔ Սկիզբ՝ էջ 8

րուած չեն:

Ամփոփելով վերոշարադրեալը, ամպիոնը կ'արձանագրէ, որ առաջարկուող փոփոխութիւնը հիմնաւերուած չէ, ժամանակավրէպ է եւ չի լուծէր այն հարցը, որուն մասին յայտարարուած է: Փոխարէնը՝ անոր ընդունումը եական վնաս պիտի հասցնէ՝ դպրոցին մէջ, կրթական համակարգի բոլոր օղակներուն մէջ առարկայի դասաւանդումին, ընդհանրապէս ազգային պատմութեան ընկալումը հասարակութեան կողմէ:

ԵՊՀ Հայոց Պատմութեան ամպիոնի վարիչ, պ.գ.դ., փրոֆ.՝ Ե. Գ. Միւնասեան

### ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՏՐՊԵՅԱՆ...

✔ Սկիզբ՝ էջ 1

կան փաստաթուղթ, անհրաժեշտ է որ ան յարգէ կողմերու օրինական շահերը եւ ընդգրկէ լուծումներ՝ համաձայնեցման ենթակայ հարցերու ամբողջ փաթեթով:

3. որեւէ համաձայնութիւն պէտք չէ վտանգէ հայ ժողովուրդի անժամանցելի եւ անօտարելի իրաւունքները: Պէտք է բացառուին կենսական գիշումները եւ կորուստները՝ յստակօրէն ամրագրելով մեր շահերը գործող ՀՀ սահմանադրափրաւական եւ միջազգային նորմերուն ու դիւանագիտական ընդունուած ընթացակարգին համահունչ:

4. սահմանազատման եւ սահմանագծման հիմք պէտք է հանդիսանան Ատրայեճանի Հանրապետութեան ԱՊՀ անդամակցութեան պահին (Սեպտեմբեր 24, 1993) գործող փաստացի սահմանները: Երկու երկիրներուն միջեւ սահմանազատումը եւ սահմանագծումը պէտք է համապատասխանեն միջազգային լաւագոյն նախընթացներուն ու նորմերուն եւ պէտք է բխին «ՄԱԿ-ի Միջազգային պայմանագրերի իրաւունքի մասին Վիեննայի կոնվենցիայի» (1969) «Հելսինկիի եզրափակիչ ակտի» (1975) եւ ԵԱՀԿ քարտուղարութեան «Պետական սահմանների սահմանագատում եւ սահմանագծում, հրատապ հարցեր եւ լուծման ուղիներ» (2017) փաստաթուղթի հայեցակարգային նորմերէն, ներառեալ այն սկզբունքէն, որուն համաձայն առ ոչինչ է ուժի սպառնալիքի, կամ գայն կիրարկելու միջոցով ձեռք բերուած որեւէ միջազգային համաձայնութիւն:

5. փոխադրութեան եւ հաղորդակցութեան այլ ուղիներու ամբողջական եւ միաժամանակ ապաշրջափակում, առանց ինքնիշխանութեան որեւէ սահմանափակումի:

6. մինչեւ Արցախի հարցի վերջնական քաղաքական կարգաւորումը եւ Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու լիակատար կիրարկումը, ապահովել արցախահայերու հաւաքական, անխոչընդոտ եւ անվտանգ վերադարձը հայրենիք՝ հիմնուած էթնիկ գտման հետեւանքով բռնաճնշումներու ենթարկուած եւ բռնի տեղահանուած անձերու իրաւունքներու լիարժէք յարգման վրայ:

- Վերադարձի նախապայման պէտք է դիտարկել.
  - Արցախին միջանկեալ կարգավիճակի տրամադրումը՝ ապահովելով արցախահայերու միջազգային նորմերով երաշխաւորուած քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքները, իրենց ամբողջ ծաւալով,
  - Արցախի ժողովուրդի անվտանգութեան գործօն երաշխիքներու ապահովումը, ներառեալ՝ խաղաղապահ ուժերու տեղադրումը,
  - Հայաստանի հետ անխոչընդոտ ցամաքային կապի ապահովումը:
- Առանց այս սկզբունքներու պահպանման ստորագրուած որեւէ փաստաթուղթ պիտի չլսաստէ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատումին, այլ պիտի վաւերացնէ ուժի կամ ուժի սպառնալիքով հարցեր լուծելու նախադեպը:

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

**Խոյ**  
Ձեր իղձերը շուտով պիտի իրականանան: Մեծ յաջողություն մը ձեր դուռը պիտի թակե այս շաբաթ:

**Ցուլ**  
Դուք շատ աշխատասեր, յամառ ու համբերատար էք: Այդ պատճառով ալ ձեր գործերը յաջողութեամբ պիտի պսակուին:

**Երկուորեակ**  
Ձեր դատը պիտի շահիք եւ վերջապէս հանգստանաք: Օտար երկիր մը ճամբորդելու ձեր ծրագիրը պիտի իրականանայ:

**Խեցգետին**  
Սիրային յարաբերութիւն մը պիտի ունենաք: Ձեր առողջութեան հոգ տարէ՛ք եւ հանգիստի ժամանակ տրամադրեցէ՛ք:

**Առիւծ**  
Քիչ մը լարուած իրավիճակ ունիք: Ձեր ընտանիքի անդամներուն նկատմամբ հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք:

**Կոյս**  
Հաճելի եւ սիրառատ շաբաթ մըն է: Ձեր բոլոր պարտականութիւնները լիովին կատարեցէ՛ք եւ բնաւ մի՛ յետաձգէք զանոնք:

**Կշիռ**  
Օտար երկրէ անձնաւորութիւն մը գործ մը պիտի առաջարկէ ձեզի: Նոր գործընկերներ պիտի ունենաք եւ գնահատուիք:

**Կարիճ**  
Աշխատանքային պարտաւորութիւնները ճշնուածութեան կ'առաջնորդեն ձեզ: Այնուամենայնիւ ձեր առողջութեան ալ հոգ պետք է տակիք:

**Աղեղնաւոր**  
Նոր ծանօթութիւններ պիտի ունենաք եւ բարեկամներու աջակցութիւնը վայելէք: Գնահատեցէ՛ք զանոնք:

**Այծեղջիւր**  
Ձեր ընտանիքի անդամներուն հետ հաճելի ժամանակ մը պիտի անցընէք բնութեան մէջ: Պատրաստուեցէ՛ք:

**Ձրիս**  
Նիւթական գետնի վրայ յաջողութիւն պիտի արձանագրէք: Ուշադրութիւն դարձուցէ՛ք մարդոց հետ ձեր ունեցած յարաբերութիւններուն:

**Ձուկ**  
Ձեր տան մէջ նոր գոյք մը պիտի ունենաք: Ճամբորդութեան ծրագիր մըն ալ պիտի իրականացնէք:



## ԲԱՐԵԿԵՆՂԱՆԻ ԱՒԱՆԴՈՅՈՒ

Բարեկենդան օրեր է, Խելքս գլխես թեր է:  
Բարեկենդանը բաղկացած է բարի եւ կենդան բառերէն: Կենդան կը նշանակէ կենսով լեցուն:



Այս տօնին մարդիկ գիրար կը շնորհաւորեն, մաղթելով՝ բարի կեանք եւ երջանկութիւն: Տօնին արմատները կը հասնին մինչեւ հեթանոսական ժամանակներ: Ընդհանրապէս ան կը տօնուի Փետրուարին, գարնանամուտէն առաջ, Մեծ Պահքի նախորդող առաջին Կիրակին: Մեծ Պահքը կը սկսի Բարեկենդանէն ետք եւ կ'երկարի մինչեւ Ս. Չատիկ:  
Բարեկենդանին հիմնական նպատակը բնութեան զարթօնը, արթնալը խմբովին տօնելն էր: Ան նաեւ կը խորհրդանշէ բարիին եւ չարին պայքարը, որ յաճախ արտայայտուած է խաղերու մէջ, ուր չարը միշտ ծաղրանքի առարկայ կը դառնայ ու կը պատժուի:  
Մեր բարեկենդանին նմանող տօներն է, գործիքնակ արեւելեան սլաւոններու Մասնեւիցա ասանդական տօնը: Բարեկենդանին նմանող տօն

մէ որեւէ գաղտնիք մը յայտնել, մասաւանդ՝ սիրած տղուն անունը:

Բարեկենդանին երգելն ու պարելն ալ բարձր տրամադրութիւն կը ստեղծէր: Այդ պարերն էր ոլոր պարը, որ տարուան խորհրդանշին էր: Ոլոր կը նշանակէ շրջանակ: Պարողները կլոր-կլոր կը դառնային, ինչպէս տարիները: Այդ պատճառով պարի շրջանակը կը կոչուէր կեանքի շրջան:  
Բարեկենդանի ամենէն գուարճալի բաժինը կը կայանար դիմակաւոր խաղերուն եւ թատերական ներկայացումներուն մէջ, որոնց ընթացքին իշխանաւորներ եւ դէպակարներ կը քննադատուէին իրենց սխալ գործերուն համար: Ամեն մարդ ազատօրէն կու տար իր կարծիքը:  
Տօնակատարութիւններուն ընթացքին կարեւոր տեղ կը գրաւէին սեղանին վրայ դրուած բազմատեսակ ճաշերը: Անոնք պատրաստուած կ'ըլլային հորթի, թռչնազգիներու եւ ոչխարի միսերով:



մը գոյութիւն ունի նաեւ Եւրոպայի եւ Պրագիլի մէջ: Ան կը կոչուի Մարտիկրա: Մարտիկրային մարդիկ գեղեցիկ դիմակներ կը կրեն իրենց դէմքերուն եւ փողոցները կը պտըտին պարելով եւ նուագելով:  
Իտալիոյ ջրանցներու քաղաքին՝ Վենետիկի մէջ ալ ամեն տարի փառաստօն մը տեղի կ'ունենայ այդ առիթով:  
Հայերուս մօտ Բարեկենդանը տօնելու ընթացքին շատ կարեւոր էին խաղերը: Այդ խաղերն մեկն ալ օրօրոցի խաղն էր: Օրօրոցը կախուած կ'ըլլար բարձր ծառի մը հաստ ճիւղէն: Աղջիկները ուրախ-ուրախ կ'օրօրուէին: Այդ տեսարանը անելի գուարճալի կը դառնար երբ կակուղ ճիւղտներով կը հարուածէին օրօրուողին ոտքերը եւ մեծ բազմութեան առջեւ կը պահանջէին իր-

Հայերը սովորութիւն ունէին Բարեկենդանի առաջին օրերուն Զաթա եւ հրուշակ (հալւա) պատրաստել: Ընթրիքին նախապիտուած ուտեստներն էին կաթնապուրը, մածուկը եւ խաշուած հակիթը:

Բարեկենդանը ուներ խորհրդանշական երկու տիկնիկ՝ Տատը, այսինքն՝ մեծամասն, որ կը կոչուէր Ուտիս եւ Պասը, այսինքն՝ մեծհայրը, որ կը կոչուէր Պաս: Բարեկենդանի օրերուն Ուտիս տատը շատ կու տրէ եւ բաւական գիրուկ կ'ըլլար, բայց Բարեկենդանին վերջին օրը հինգած ու պատառուած պուպրիկի կը վերածուէր: Այդ օր գինք լեռնէն վար կը գլորէին ու կը փոխարինէին Պաս պապով:

Պաս պապը, որ կը կոչուէր նաեւ Աքլատիս Մեծ Պահքը կը խորհրդանշէր: Պաս եւ Պահք նոյն իմաստը ունին: Աքլատիսին տիկնիկը կը պատրաստէին տիսի մը կամ կլոր գետնախնձորի մը վրայ եօթը փետուր դնելով: Եօթը փետուրները կը համապատասխանէին Մեծ Պահքի եօթը շաբաթներուն եւ օրացոյցի դեր կը կատարէին: Իւրաքանչիւր շաբթուան վերջը փետուր մը կը հանէին: Աքլատիսը առաստաղէն կախելու ընթացքին կ'երգէին.

Տատը գնաց շերտիդ ձեռքին,  
Պասը եկաւ մահակն ուսին:  
Հայերը այսպիսի ուրախութեամբ կը տօնէին Բարեկենդանը՝ ծափով ու ծիծաղով, երգով ու պարով:  
Ուրախ Բարեկենդան կը մաղթենք բոլորիդ:

## Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԻՅԱՆ ՍՈՒՐԻՅՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ պասքեթի աղջկանց U-18-ի փխոյեանական աւարտական քառ-եակի մրցումներուն, ՅՄԸՄ-ի կազմը Դամասկոսի մէջ կատարեց երեք մրցում, որոնց ընթացքին արձանագրեց երկու պարտութիւն եւ մէկ յաղթանակ: Առաջին օրը կազմը մրցակից ունեցաւ Յալէպի Յուրիէն, որ ար-



ձանագրեց անակնկալ պարտութիւն մը 52 - 48 արդիւնքով: ՅՄԸՄ-ի երկրորդ մրցակիցը դարձաւ Լաթաքիոյ Յըթթիկը եւ կրցաւ դուրս գալ յաղթական՝ 68 - 59 արդիւնքով: Կազմը իր վերջին հանդիպումը կատարեց Դամասկոսի Ուահտէին հետ եւ պարտութեան մատնուեցաւ՝ 39-65 արդիւնքով: Աւելցնենք, որ Ուահտէ գրաւեց աղիւսակի առաջին դիրքը, Յըթթիկ՝ երկրորդը, իսկ ՅՄԸՄ-ը՝ երրորդ դիրքը:

-Սուրիոյ ֆութպոլի տղոց հաւաքականը վերադարձաւ Դամասկոս, ուր դիմաւորուեցաւ մեծաթիւ ժողովուրդին կողմէ: Կազմը տպաւորիչ խաղարկութեամբ իր մասնակցութիւնը բերաւ Զաթարի մէջ տեղի ունեցած Ափոյ փխոյեանական մրցումներուն եւ արժանացաւ բոլորին համակրանքին: Աւելցնենք, որ յառաջիկայ օրերուն պիտի յստականայ հաւաքականի արժանիքի մարզիչ Յիքթոր Զուփերի ճակատագիրը: Եթէ գոյգ կողմերը համաձայնութեան հասնին, ան պայմանագիր մը պիտի ստորագրէ Սուրիոյ ֆութպոլի դաշնութեան հետ մինչեւ 2026-ի համաշխարհային ֆութպոլի փխոյեանութեան աւարտը:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ՌՈՍԱՆ ՊԱՇՏՈՆԱԶՈՒՐԿ ԸՐԱՒ ԺՈՂԵ ՍՈՒՐԻՆԻՍ

Իտալական Ռոման պաշտօնագուրկ ըրաւ խումբի գլխաւոր մարզիչ ժոզէ Մորինիօն: Այս մասին պաշտօնապէս յայտարարեց ակումբի մամուլի ծառայութիւնը: «Փախաքը ունինք մեր բոլորին անուսով շնորհակալութիւն յայտնելու ժոզէին՝ իր կատարած աշխատանքին եւ ջանքերուն համար: Ան մեծ ներդրում ունեցած է ակումբ ժամանած պահէն ի վեր: Անոր հետ կապուած հրաշայի յիշողութիւնները մեզի հետ յաւերժ կը մնան»:



արձանագրուած է ակումբին կողմէ տարածուած հաղորդագրութեան մէջ: ժոզէ Մորինիօ Ռոմայի գլխաւոր մարզիչի պաշտօնը ստանձնած էր 2021 թուականին: Մորինիօ Ռոմայի հետ դարձած է համաժողովներու լիկայի փխոյեան, 2022/23 մրցաշրջանին հասած է Եւրոպայի լիկայի եզրափակիչ:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 474)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

12x12 crossword grid for puzzle 474.

#### Հորիզոնական

- 1- Կրան մամուռ կապած ջրալի տեղ:
2- Հակառակ՝ ցուցական դերանուն: Հակառակ՝ անձնական դերանուն:
3- Լեռ: Հակառակ՝ 4800: Ծառ տայն:
4- Հինգած պանիրի մանր որդ: Հակառակ՝ առաջին կինը:
5- Ցաւի մէջ տառապող: Միայն:
6- Աստուածաշունչին մէջ Աբրահամի գաւակը: Եւս: Հարցական դերանուն:
7- Ամենէն առաջ: Ուրիշէ առաջ շարժիլ:
8- Աղեղի արձակած սլաք: Արական անուն:
9- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ պտոյտ:
10- Պարգեւել, շնորհել: 4004:
11- Ձայնանիշ մը: Սուրիական լրատու գործակալութիւն:
12- Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Թունդ ..... իր կուճին կը վատտ»: Միջազգային կազմակերպութիւն մը:


#### Ուղղահայեաց

- 1- Լեւոն Շանթի վիպակներէն, որուն հերոսները հայրենասիրութենէ մղուած կը պայքարին նախապաշարուններու եւ շահամոլութիւններու դէմ, սուիրուելով ազգը լուսաւորելու սրբագան առաքելութեան:
2- Հայրապետական գաւազան: Սրբուհի մը:
3- Հակառակ՝ մուր:
4- Տառի մը անունը: Կարասի: Իգական անուն:
5- Կողոպուտի արշաւանք:
6- Հայերէնի հոլովներէն: Ֆրոյտի երկերէն. «..... Եւ Այնը»:
7- Անձնական դերանուն: Հակառակ՝ եական բայ: Լեցուն:
8- Սպարապետ:
9- Հակառակ՝ բայական լծորդութիւն: Հակառակ՝ հոս:
10- Ճառագայթել: Ծեծածով եւ իւղով թանձրապուր:
11- Կրկնուած ձայնաւորներ: Հակառակ՝ տարածքի միաւոր:
12- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Գոյութեան վտանգը ո՛չ թէ հայութեան այս կամ այն դասակարգին էր պատկանում, այլ ընդհանրութեան»:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 473)

12x12 crossword grid for puzzle 473.

#### ԼՈՒՐԻՅԱՆ



Հանդիսապետութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանի, Երեքշաբթի, 6 Փետրուար

## ՍՐԲՈՅ ԴԵՒՈՆՂԵԱՆՅ ԲԱԶԱՆԱՅԻՅ ՏՕՆԸ ՄԵԾԱԹԻ ՀԱԽՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՅԻՇՆԱԿՈՒԵՅԱՒ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ



2024-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմէն ներս Սուրբ եւ Ամմահ Պատարագով յիշատակուեցաւ Սրբոց Ղեւոնդեանց Բահանաներու տօնը, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, թեմի հոգեւորականաց դասուն մասնակցութեամբ:

Ուրախալի երեւոյթ էր տեսնել ներկայութիւնը մեծաթիւ հաւատացեալներու, Կրթասիրաց Ս. Զեմպերեան Երկրորդ. Վարժարանի եւ Լ.

Նորդի Օգնական Հոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան եւ Հոգշ. Ս. Արմեն Աբղ. Գալաճեան: Ս. Պատարա-

ուրանալուն դէմ: Ան նշեց, թէ Զրիստոս չեկաւ քահանայութիւնը ջնջելու, այլ իր



գի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց «Շողակաթ» երգչախումբը:

Սրբոց Ղեւոնդեանց Բահանաներու տօնին խորհուրդը հաւատացեալներուն ուղղեց պատարագիչ քահանայ հայրը, բնաբան ունենա-

մարմինի ընծայաբերումով եւ արեան հեղումով Նոր քահանայութիւն հաստատելու:

Քահանայ Հայրը անդրադառ-

կաները աղօթքով պայքարելու չարին դէմ եւ դառնալու ի լոյս աստուածգիտութեան: Ան մաղթեց, որ խոնարհ հոգիով մօտենանք մեր սուրբ հայրերուն եւ պատուենք քահանայ հայրերը:

Այս առիթով, ան շնորհաւորեց Հայ Եկեղեցւոյ հայրապետները, եպիսկոպոսները, քահանայ հայրերը, սարկաւազները եւ անոնց ճամբով եկեղեցւոյ զաւակները, մաղթելով, որ հաւատքի մէջ առաւել զօրանան:

Աւարտին Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ, Բերիոյ Հայոց Թեմի վախճանեալ հոգեւորականներուն, ինչպէս նաեւ 6 Փետրուար 2023-ի երկրաշարժին զոհ գացած հայորդիներ Միրնա Մինասեան-Թեւեքեճեանի եւ Ալպեր Նարեկ Թեւեքեճեանի հոգիներուն խաղաղութեան համար:

Պատարագէն ետք, ներկաները համախմբուեցան եկեղեցւոյ ներքնասրահէն ներս, ուր «Շողակաթ» երգչախումբի անդամները Սրբ. Ղեւոնդեանց եւ Սրբ. Վարդանանց տօներուն նուիրուած երգեր երգեցին: Սրբազան Հայրը յորդորեց ներկաները, յայտնելով, որ Ղեւոնդեանց քահանայից հաւատքի լոյսին տակ,



Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարանի աշակերտներուն, որոնք Ս. Պատարագին մասնակցելով կ'արտայայտին իրենց յար-

լով հետեւեալ աստուածաշնչական համարը. «*Հետեւեցէ՛ք ձեր հոգեւոր առաջնորդներուն եւ անոնց հաւատքի վկայութիւնը ունեցէ՛ք*»:



նալով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին «Մարդուծի Պատրաստութեան Տարի» հռչակագիրին, յայտնեց, որ մեր ժողովուրդի հոգեւոր առաջնորդները եւ քահանաները Հայ Եկեղեցին բնորոշող արժեքներով մարդուծ կը պատրաստեն: Ան նշեց, թէ Ս. Ղեւոնդ Երեց եւ

Ներկայիս տիրող դժուարութիւններուն մէջ մղենք մեր հոգեւոր պայքարը՝ դաւանելով քրիստոնէական հաւատքը եւ Զրիստոսը ապրեցնելով մեր կեանքին մէջ: Սրբազան Հայրը շնորհաւորեց Թեմի հոգեւորականները եւ մաղթեց, որ ուրախութեամբ, կայտառութեամբ



գանքն ու սերը թեմի հոգեւորականաց դասուն նկատմամբ:

Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց Արժ. Ս. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան: Ս. Սեղանին սպասարկեցին քահանայ հայրերը: Արարողութեան ներկայ էին նաեւ Առաջ-

Քահանայ Հայրը պարզաբանելով Ղեւոնդեանց Բահանայից տօնին խորհուրդը, յայտնեց, թէ Ղեւոնդեանց քահանաները նահատակութեան գնով հաւատքի եւ հոգեւոր պատերազմ մղեցին՝ չարին, անաստուածութեան եւ Զրիստոսը



Յովսէփ Կաթողիկոս աշակերտելով Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի, հոգեւոր պատերազմ մղեցին, որպէսզի հայ ժողովուրդը չշեղի իր քրիստոնէական ճշմարիտ հաւատքէն:

Քահանայ Հայրը հրաւիրեց ներ-

եւ հաւատքով լեցուն շարունակել իրենց ծառայութիւնը:

Ապա, Տիկնանց յանձնախումբին կողմէ տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն:

**Մարինա Զիլաբոջեան-Պողիկեան**